

Հովհաննես Խորիկյան

**ԿՈՎԿԱՍԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

Գյուլմրի - 2014

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

ՀՈՎՅԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԶԱՐՑԵՐ

(Դասախոսությունների նյութեր)

ԳՅՈՒՄՐԻ

Հեղինակային հրատարակություն

2014

ՀՏԴ 93/99 (042.4) Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել
ԳՄԴ 63.3 ց7 Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական
Խ 826 մանկավարժական ինստիտուտի
գիտական խորհրդի 31.03.2014 որոշմամբ

Գրախոսներ՝ ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների
պատմության ամբիոն,
Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարանի Համաշխարհային
պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Խմբագիր՝ պ. գ. ք. Ա. Հ. Հակոբյան

Խորիկյան Հովհաննես

Խ 826 Կովկասի պատմության հիմնահարցեր:
Դասախոսությունների նյութեր/Հ. Խորիկյան.-Գյումրի:
Հեղ. հրատ., 2014.- 98 էջ:

Ձեռնարկը նախատեսվում է Գյումրու Մ. Նալբանդյանի
անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության
բաժնի մագիստրական ծրագրով ուսումնառողների համար, ովքեր
գիտատեսական դասընթացի շրջանակներում անցնում են
«Կովկասի պատմության հիմնահարցեր» առարկան: Ձեռնարկը նաև
կարող է օգտակար լինել ընդհանրապես պատմություն և
քաղաքագիտություն մասնագիտությամբ ուսումնառողների համար:

ՀՏԴ 93/99 (042.4)

ԳՄԴ 63.3 ց7

ISBN 978-9939-0-1103-5

© Խորիկյան Հ., 2014

Դասախոսության կառույցը

Դասընթացը կազմված է տասներկու դասախոսություններից, որոնք ներառված են երեք բաժինների մեջ:

Առաջին բաժնում ներկայացված են հետևյալ 6 թեմաները.

ա.Ներածություն:

բ.Յյուսիսային Կովկասը հին ժամանակներից մինչև 20-րդ դարի 90-ական թվականների սկիզբը (ընդհանուր ակնարկ):

գ.Գրավոր մշակույթի զարգացման պատմությունն Այսրկովկասում:

դ.«Ալբանիա», «Ադուանք», «Առան» տեղանունների ստուգաբանությունն Արևելյան Այսրկովկասի էթնիկական պատմության տեսանկյունից:

ե.Աղվանքի պատմության «ադրբեջանական հայեցակարգը»՝ քաղաքական դրդապատճառ:

զ.Հայ-վրացական թագավորության գաղափարը երկու ժողովուրդների քաղաքական նպատակների տեսանկյունից:

Երկրորդ բաժնում ներկայացված են հետևյալ 3 թեմաները.

ա.Իսլամը որպես քաղաքական միավորման գործոն Կովկասում (20-րդ դարի վերջ):

բ.Կովկասյան միասնության գաղափարը պատմականության տեսանկյունից:

գ.Ազգայնականությունը Կովկասում 20-րդ դարի վերջին:

Երրորդ բաժնում ներկայացված են հետևյալ 3 թեմաները.

ա.Թուրքիայի աշխարհաքաղաքական դերակատարությունը Կովկասում 20-րդ դարի վերջին:

բ.Իրան-Ադրբեջան հարաբերությունները 20-րդ դարի 90-ական թվականների սկզբին:

գ.ԻԻՅ-Ադրբեջան քաղաքական հարաբերություն-
ները 20-րդ դարի վերջին-21-րդ դարի սկզբին:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Համաշխարհային գործընթացները 20-21-րդ դարերում զարգանում են բուռն և շատ արագ, ինչն իր հետ բերում է քաղաքական անորոշություն և անկայունություն:

Խորհրդային Միության անկմանը հաջորդած աշխարհակարգային փոփոխություններն ու նարտահրավերները ստիպեցին ու ստիպում են այլ տեսանկյուններից վերլուծել ու բացատրել կովկասյան տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողությունները:

Ստեղծված իրավիճակը պահանջում է հեզեմոնիայի, ազդեցության ոլորտների, անվտանգության, կենսական շահերի տիրույթի ավանդական հասկացությունների արմատական վերագնահատում: Այս առումով հրատապ խնդիր է ուսումնասիրել տարածաշրջանում առկա սոցիալ-տնտեսական, քաղաքական, էթնոազգային գործընթացները, որոնք սկիզբ են առնում պատմական անցյալից:

Հետևաբար սույն՝ «Կովկասի պատմության հիմնահարցեր» գիտատեսական դասընթացի դասավանդումն ունի ոչ միայն գիտական-ուսումնական, այլև քաղաքական նշանակություն, քանի որ Կովկասում տեղի ունեցող զարգացումները ուղղակի կամ անուղղակի ազդում են մեր երկրի՝ Հայաստանի Հանրապետության պետական-ազգային անվտանգության ապահովության վրա:

Անշուշտ, դասախոսությունների և գործնական աշխատանքների թեմաների ընտրությունը պայմանավորված է մի շարք առանձնահատկություններով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ձևաբովանդակային տրամաբանությունը: Թեմաները խմբավորել և

դասակարգել ենք ըստ ժամանակագրական և բովանդակային սկզբունքի՝ հին ժամանակներից մինչև 21-րդ դարի սկզբները: Ծիշտ է, դասակարգված թեմաները տիպաբանորեն ներկայացնում են 3յուսիսային Կովկասի և Այսրկովկասի քաղաքական, էթնիկական, մշակութային, կրոնի պատմության այս կամ այն հիմնահարցերը, սակայն դասընթացում ընտրված թեմաները մշակված և ներկայացված են մեթոդաբանական այնպիսի հիմքով, որն ապահովում է ներկայացվող հարցադրումների և տեսակետների ամբողջական յուրացումը՝ պահպանելով գիտաքննական վերլուծության սկզբունքները:

Դասընթացի թեմաները ներկայացնելիս կիրառվել են պատմաքննադատական, պատմահամեմատական, սոցիալ-մշակութային, համեմատական-համադրական, պատմավերլուծական մեթոդները:

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել «Կովկաս» աշխարհագրական տարածքի էթնիկ և մշակութային պատմությանը, Կովկասի ժողովուրդների քաղաքական պատմության կարևորագույն անցքերին, Կովկասի և Այսրկովկասի ժողովուրդների ազգամիջյան հարաբերություններին, «արտաքին աշխարհ-Կովկաս» զարգացումներին, դիտարկել Կովկասյան էթնո-մշակութային աշխարհը՝ որպես էթնո-քաղաքական հարաբերությունների մոդել:

Դասընթացի ավարտին ուսանողը *կհամա* Կովկասի էթնո-լեզվական պատկերը և դրա ձևավորումը, ազգային քաղաքականության դրսևորումները, ազգամիջյան հարաբերությունների մոդելները, էթնո-քաղաքական վարքի մոդելները, *կհասկանա* քաղաքական և մշակութային զարգացումների ընդհանուր և առանձնահատուկ դրսևորումները, ազգային մեծամասնություն-փոքրամասնություն հարաբերությունների մոդելները,

Կովկասյան տարածաշրջանի ներքին խնդիրները և «արտաքին աշխարհի» ազդեցությունը Կովկասյան էթնո-մշակութային աշխարհի վրա, *կկարողանա* ինքնուրույն կողմնորոշվել ազգային քաղաքականության առհասարակ և Կովկասյան տարածաշրջանի հանդեպ ու Կովկասի ներսում առկա ազգային քաղաքականության խնդիրներում, փորձագիտական վերլուծություններ անել Կովկասի էթնո-մշակութային և էթնո-քաղաքական զարգացումների խնդիրներում:

Դասընթացը կազմելիս օգտվել ենք բազմաբնույթ գիտական հրապարակումներից՝ դրսևորելով դրանց նկատմամբ մեր մասնագիտական վերաբերմունքը:

Դասախոսություն 1՝ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կովկասի հիմնական բնորոշումները նշանակալից չափով որոշվում են ֆիզիկա-աշխարհագրական, տարածքային, կլիմայական և այլ առանձնահատկություններով, որոնք պատմության ողջ ընթացքում խորն ազդեցություն են գործել և շարունակում են գործել նրա էթնոագգային կազմի, ժողովուրդների և երկրների պատմական ճակատագրի, քաղաքական քարտեզի ընդհանուր տեսքի և այլնի վրա: Ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, պետության հողը, տարածքը այն ռազմավարական միջոցն է, որը գերազանցում է մնացած ռեսուրսներին:

Ինչ վերաբերում է Կովկաս աշխարհագրական հասկացությանը, ապա նրա տարածքը Կովկասյան լեռներով բաժանվում է առանձին հատվածների: Արևմուտքից և արևելքից այն սահմանակից է Սև և Կասպից ծովերին: Ծայրահեղ կտրտված տեղագրությունն էլ շատ հարցերում օգնում է բացատրել Կովկասի կտրուկ աչքի զարնող էթնիկական տարասեռությունը: Աշխարհագրությունը և հատկապես զգալի տեղագրական արգելքներն էլ ժողովուրդների և ցեղերի առավել լայն ինտեգրացման ճանապարհին բացատրում են էթնիկական նույնա-կանացման ակներև ոչ ամբողջականությունը և տեղայնացումը: Այս երևույթին նպաստում է նաև այն հանգամանքը, որ Կովկասին բնորոշ ֆիզիկա-աշխարհագրական պայմաններում մարդը հակված է բնակություն հաստատել հարթավայրերում՝ մեկուսացված իր հարևաններից:

Չաճախ համայնական, ցեղային, տեղային, շրջանային նույնականությունները (օրինակ, Վրաստանում՝ մեգրելական, կախեթական, իմերեթական, աճարական և այլն) ձեռք են բերել ոչ պակաս նշանակություն, քան էթնոագգային

նույնացումը: Սա էլ իր հերթին պայմաններ է ստեղծել զանազան մշակույթների և լեզուների պահպանման համար: Միևնույն ժամանակ տարածաշրջանը կամուրջ է հանդիսացել քոչվոր ժողովուրդների տեղաշարժերի համար՝ Ասիայից Եվրոպա և Մերձավոր Արևելք: Այս իրողությունը ևս ազդել է Կովկասի էթնիկական և մշակութային այլազանության ձևավորման վրա:

Անհիշելի ժամանակներից Կովկասը դիտվել է որպես կարևոր աշխարհառազմավարական շրջաններից մեկը, որն անջրպետում էր Արևելյան Եվրոպան ասիական տափաստաններից, ուղղափառությունը՝ իսլամից. արգելապատնեշ էր Բյուզանդական, Օսմանյան, Պարսկական, Ռուսական կայսրությունների միջև և միաժամանակ կայսրությունների պայքարի ու միջէթնիկական բախումների թատերաբեմ էր: Եվրոպայի և Ասիայի սահմանաեզր հանդիսացող Կովկասը հարմարագույն հենակետ է Միջին և Մերձավոր Արևելք, ինչպես նաև Կասպից, Սև, Միջերկրական ծովերի ավազաններ խորանալու համար: Հարկավ, պետք է նշել նաև, որ այն կապող օղակ է նշված շրջանների միջև: Իր ամբողջ գրավոր պատմության ընթացքում Կովկասը ապրել է անվերջ պատերազմներ և բախումներ տարբեր ռազմասեր կլանների, հորդանների, ցեղերի, դավանանքների, պետությունների և կայսրությունների միջև:

Տարածաշրջանի յուրահատկությունների ամբողջությունը ամենաուղղակի կերպով արտացոլվել է Կովկասի ժողովուրդների և երկրների պատմական ճակատագրի վրա: Ցավոք, այս պատմահոգեբանական իրողությունը մեր օրերում ևս իրեն զգացնել է տալիս, ընդ որում, առավել խորը և սուր շեշտադրումներով: Ստացվել է այնպես, որ գիտության համար ոչ ընդունելի մեթոդներով և պնդումներով կեղծվում են պատմական փաստերը, և պատմական անցյալը շրջադարձվում է՝

հոգուտ այս կամ այն քաղաքական նպատակի: Այսպես, օրինակ, ադրբեջանցիները հավակնություններ են ցուցաբերում ոչ միայն բնիկ հայկական հողերի նկատմամբ, այլ նաև հարավային Դաղստանի և Դերբենտի նկատմամբ, իսկ հարավային Դաղստանի լեզգիները պահանջում են միավորվել ներկայիս հյուսիսային Ադրբեջանի այն տարածքների հետ, որտեղ վաղնջական ժամանակներից ի վեր հոծ կերպով բնակվել են լեզգիախոս խմբի ժողովուրդներ: Այս և այլ օրինակների արդյունքում տարածաշրջանի ժողովուրդները բաժանվել են բնիկների և եկվորների, տերերի և հյուրերի, տիտղոսավորների ու փոքրերի և այլն: Այդուհանդերձ կովկասյան ցանկացած ժողովրդի պատմությունը անհնար է քննարկել մեկուսացված, համակովկասյան պատմական գործընթացի և այն սոցիոնշակութային միջավայրի շրջանակներից դուրս, որն իրենից ներկայացնում է Կովկասյան բոլոր ժողովուրդների համաստեղծագործության արդյունք: Այդ ժողովուրդները չեն կարող փախչել ո՛չ իրենց պատմությունից ու հողից, ո՛չ էլ մեկմեկուց:

Հազարամյակներ շարունակ Կովկասը եղել է տարբեր ցեղերի տեղաշարժման անցուղին՝ սկսած կիմերներից և սկյութերից մինչև զանազան թյուրքական ցեղերը: Նրանց մի մասը մնում էր Կովկասում, խառնվում տեղաբնիկներին՝ ստեղծելով էթնիկական նոր ընդհանրություններ: Այստեղ պատմության ողջ ընթացքում տեղի էին ունենում ինչպես բնիկ, այնպես էլ եկվոր տարբեր ցեղերի, ժողովուրդների, էթնոսների, մշտական տեղափոխումներ և ձուլումներ:

Հնագույն ժամանակներից սկսած՝ մերձկասպյան տափաստանները տափաստանաբնակների համար կարևորագույն ճանապարհ էին ծառայում դեպի Այսրկովկաս՝ կողոպտչական արշավանքներ կազմա-

կերպելու համար կամ էլ միավորված ցեղերի և տեղական ժողովուրդների միջև անվերջ բախումների ասպարեզ էին: Այդ ճանապարհներից կարևոր էին հատկապես երկուսը՝ «կասափական կամ ալբանական» դարպասներ կոչված Դերբենտի և Դարիալի (Ալանաց դռներ) լեռնանցքները, որոնք բազմիցս հիշատակվում են տարալեզու սկզբնազբյուրներում:

Ըստ մասնագետների՝ մ. թ. 4-6-րդ դարերում ժողովուրդների մեծ տեղաշարժերի արդյունքում Յյուսիսային Կովկասում ձևավորվում են 4 էթնոմշակութային ընդհանրություններ՝ պայմանակա-նորեն անվանված

- անդրկուբանյան,
- կենտրոնական կովկասյան,
- դաղստանյան,
- և նախակովկասյան:

Նրանցից յուրաքանչյուրում իշխող դեր են ունեցել որոշակի էթնիկական խմբեր, որոնք բնորոշվում են իրենց էթնոլեզվական կազմի խայտաբղետությամբ և բազմազանությամբ:

Ադրդեա-չերքեզա-կաբարդինական էթնիկական ընդհանրության ձևավորման սկիզբը դրել են Անդրկուբան ներթափանցած մեոտները և մասամբ ուծացված սարմատները նախկինում այստեղ բնակվող մեոտների և Սև ծովի առափնյա գիքերի ցեղամիության ցեղերի հետ: Կենտրոնական կովկասյան էթնոմշակութային շրջանում գերակշռում էին ադրդեները, հյուսիսայինում՝ ալանները և լեռնային գոտու բնիկ ցեղերը, որոնք որոշակի դեր են ունեցել կարաչայների, օսերի, բալկարների, չեչենների և

ինգուշների էթնոգենեզի գործընթացում, դադստանյան տեղական ցեղերը, որոնք ներկայիս լեռնային ժողովուրդների մեծ մասի նախնիներն են, նախակովկասյան՝ հոնական ցեղերը:

Կովկասյան ժողովուրդների կյանքում ոչ պակաս դեր են ունեցել նաև քոչվորները. նախ՝ իրանցիները, իսկ մ. թ. 4-րդ դարի վերջից՝ հոնները: Անկասկած, արևելյան Կովկասի բնակչության էթնիկական կազմի վրա մեծ ազդեցություն է գործել նաև մ. թ. 7-րդ դարում ձևավորված խազարական խաքանությունը, որը, որպես առավել հզոր քաղաքական կազմավորում, ձևավորվեց մերձծովյան Դադստանում և արևելյան Նախակովկասում: Կովկասում իրենց հետքն են թողել նաև արաբները, թյուրքալեզու ցեղերը՝ խազարները, բուլկարները, ղփչախները և այլն:

Կովկասը կապված էր Արևելյան Եվրոպայի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ բազմաթիվ ճանապարհների խիտ ցանցով: Այն դեպքում, երբ արևմտյան Կովկասը կապված էր բյուզանդական, ապա ջենովական առևտրի հետ, արևելյան Կովկասը և Դադստանը հիմնականում շաղկապված էին Մերձավոր Արևելքի երկրների հետ: Կովկասով էր անցնում Մետաքսի մեծ ճանապարհը, որի նշանակությունը չափազանց կարևոր էր Արևելքի և Արևմուտքի առևտրային ու մշակութային հարաբերություններում:

Նշենք նաև, որ 15-17-րդ դարերում մեծանում է նաև հայերի դերը Հյուսիսային Կովկասի առևտրական հարաբերություններում, և չերքեզների միջավայրում հիմնավորված հայերին, սկզբնապես հայ ռազմիկներին, կոչում էին «չերքեզահայեր» (լեռնահայեր, անդրկուբանյան հայեր, էրմելի=հայեր), որոնք ունեին սոցիալական բարձր կարգավիճակ և պահպանում են հավատարմությունը Հայ Առաքելական

եկեղեցուն: Չերքեզահայերը 19-րդ դարում տեղափոխվում են հիմնականում Արմավիր և Մայկոպ:

Կովկասի տարբեր էթնոագգային խմբերի փոխազդեցությունը արտացոլվում էր նաև նրանց լեզվի, մարդաբանական տիպի, նյութական և հոգևոր մշակույթի առանձնահատկություններում: Այս կամ այն լեզվաընտանիքում կան բազմաթիվ լեզվական փոխառություններ մյուս լեզուներից, որոնք նույնիսկ ծագումնաբանորեն խիստ տարբեր են: Հատկանշական է, որ դարերի ընթացքում իրանական, թյուրքական, կովկասյան-իբերական ծագման բոլոր ժողովուրդները մարդաբանորեն ընդհանրացել են և ամբողջությամբ կարելի է ասել, որ պատկանում են եվրոպոիդ ռասայի կովկասյան տիպին: Քիչ է տարբերվում նաև նրանց ավանդական նյութական և հոգևոր մշակույթը: Այս ամենով հանդերձ հարյուրամյակներ շարունակ կովկասյան ժողովուրդներից միայն հայերն ու վրացիներն են ունեցել առավել կամ պակաս գիտակցված էթնոագգային նույնականացում:

Կարելի է եզրակացնել, որ «Կովկաս» հասկացությունն ամբողջությամբ, «Այսրկովկաս»-ը և «Հյուսիսային Կովկաս»-ն առանձին, երբեք էլ չեն ունեցել քաղաքական բովանդակություն:

Կովկասի յուրահատկությունն այն է, որ ի հավելումն վերը նշված առանձնահատկությունների՝ կովկասյան ժողովուրդների կազմավորումը և գոյատևումը այս կամ այն ձևով կապված չէր քաղաքական կազմավորումների հետ: Հազարամյակներ շարունակ տարածաշրջանը կամ բուֆերային գոտի էր մրցող կայսրությունների միջև, կամ էլ նրանց բաղկացուցիչ մասը: Վաղնջական ժամանակներից սկսած՝ տարածաշրջանում դրվել էին սահմաններ, որոնք բաժանում էին էթնոսների բնակության տարածքները,

որոնք պատկանում էին մշակութային-քաղաքակրթական տարբեր շրջանների՝ հաճախ թշնամանքով տրամադրված մեկմեկու հանդեպ՝ Արևելահռոմեական կայսրություն, Բյուզանդիա, Պարթևստան, արաբներ, թյուրքեր, մոնղոլներ, Պարսկական, Օսմանյան, Ռուսական կայսրություններ: Քրիստոնեություն և իսլամ, սունիզմ և շիիզմ, կովկասյան-իբերական, թյուրքական, սեմա-քամական լեզվաընտանիքներին պատկանող ժողովուրդներ, հնդեվրոպական ընտանիքի տարբեր ճյուղեր, բախվում էին այստեղ՝ առաջացնելով գրեթե անլուծելի հակասություններ և բախումներ:

Ամբողջ ասվածի համատեքստում հարց է ծագում. կարելի է՞ Կովկասը համարել առանձին քաղաքակրթություն կամ ինչ-որ միասնական մշակութային-քաղաքակրթական արեալ և կարելի է՞ արդյոք խոսել կովկասյան քաղաքակրթության մասին: Այս առումով պատմական Կովկասը պայմանականորեն կարելի է դիտարկել ինչ-որ մի մշակութային-քաղաքակրթական շրջան՝ կազմված բազմաթիվ տարրերից, ինչպես զարգացման աստիճանից, այնպես էլ տարբեր էթնոմշակութային, տարածաշրջանային, կրոնադավանական և այլ շերտերի առկայությունից: Ոչ ավելի, քան 30 մլն մարդ ոչ թե պարզապես տարբեր էթնոսների և ժողովուրդների ներկայացուցիչներ են, այլ էթնոսներն ու ժողովուրդներն են պատկանում տարբեր լեզվաընտանիքների: Բայց և այնպես, չի կարելի ասել, թե Կովկասում կան 2, 3, 4, շատ քաղաքակրթություններ: Այդ իսկ պատճառով, ավելի ճիշտ կլինի խոսել կովկասյան մշակութային-պատմական համակեցության մասին, որին բնորոշ են բազմաթիվ, իրար հետ փոխկապակցված, ինչ-որ տեղ հակասող և նույնիսկ ընդհարվող ենթամշակույթները: Այս վիճակն ավելի շատ կարելի է բնութագրել որպես բեկորային և

բախումնային, քան միասնական և ամբողջական: Ի տարբերություն արևմտյան քրիստոնեական պատման՝ մշակութային համակեցության, որը հիմնված է միասնական պատմական-մշակութային և կրոնական ինֆրաստրուկտուրայի վրա՝ բազմակերպությունը և բեկումները արմատավորված են հենց կովկասյան մշակութային-քաղաքակրթական շրջանի ինֆրաստրուկտուրայում:

Այսպիսով, դասընթացի նպատակն է գիտաճանաչողական գործընթացի միջոցով ուսանողներին քաջատեղյակ դարձնել Հյուսիսային Կովկասի և Այսրկովկասի պատմության տարբեր հարցերին, որոնք պատմականորեն խիստ արդիական են նաև մեր ժամանակներում: Դասընթացի վերջում ուսանողների մոտ կձևավորվեն գործնական և տեսական գիտելիքներ տարածաշրջանի առանձնահատկությունների ու զարգացումների վերաբերյալ:

**Դասախոսություն 2՝ ՀՅՈՒՄԻԱԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՀԻՆ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ)**

Հանգուցային բառեր. ադաթ, ժողովուրդներ, համայնք, էթնիկական պատկեր, ազգային պատկանելություն, լեզվական ցեղակցություն, ռուսերեն լեզու

Սույն դասախոսությունում ընդհանրական առումով ներկայացվում է Հյուսիսային Կովկասի էթնիկական պատմությունը հին ժամանակներից մինչև 20-րդ դարի 90-ական թվականների սկիզբը՝ կանգ առնելով քաղաքական կարևոր նշանակություն ունեցող առանձին իրադարձությունների լուսաբանման վրա: Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները միշտ էլ կարևոր են եղել Հայաստանի համար, քանի որ դրանց զոմե որոշ մասի նկատմամբ պետք են հստակ քաղաքական մոտեցումներ և գնահատականներ:

Հյուսիսային Կովկասի էթնիկական ու լեզվական պատկերը չափազանց խայտաբղետ է: Արևմտյան մասը մինչև 19-րդ դարի կեսերը բնակեցված էր տարբեր չերքեզական ցեղերով: Սակայն անտիկ ժամանակներից մինչև ուշ միջնադար հիմնական բնակչությունը կազմում էին ալանները՝ մի իրանալեզու ժողովուրդ, որ աստիճանաբար դուրս մղվեց չերքեզների կողմից հատկապես 13-րդ դարում՝ մոնղոլների ներխուժումից հետո: Ալանների հետնորդներն են ներկայիս օսերը, որոնցից արևելք հանդիպում ենք նախական (չեչեն-ինգուշական) ցեղերին: Դադստանում խոսում են բազմաթիվ լեզուներով, որոնցից մի քանիսով՝ բնակչության փոքր խմբեր: Նշված տարածաշրջանի տարբեր մասերում ապրում են փոքր թվով թյուրքալեզու ժողովուրդներ: Հյուսիսային Կովկասի մասին խոսելիս չպետք է շփոթել ազգային պատկանելությունը և լեզվական ցեղակցությունը: Անհատն ավելի շուտ ցեղի անդամ է և ոչ ժողովրդի, և պարտադիր չէ, որ ցեղը լինի

միալեզու: Հյուսիսային Կովկասի բնակչության մեծ մասը երկլեզու է (կամ բազմալեզու), և, անկասկած, դրուքյունն այսպիսին էր անհիշելի ժամանակներից ի վեր: Ռուսերենը Հյուսիսային Կովկասում պետական գրագրության լեզուն է, քաղաքներում ռուսերենն այժմ գերիշխող լեզուն է և նրա գործառույթն է *lingua franca* ողջ տարածաշրջանում:

Քրիստոնեությունը տարածվել է Հյուսիսային Կովկասում առնվազն բյուզանդական Հուստինիանոս կայսեր ժամանակներում (6-րդ դար): Հույների, իսկ ավելի ուշ՝ վրացիների ձեռքով ուղղափառ հավատը հզոր գործիք դարձավ: Սոցիալական տեղաշարժերը, որոնք հետևանք էին մոնղոլների ներխուժումների և հատկապես 1453 թ. թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի նվաճման, թուլացրեցին եկեղեցու դիրքերը: 18-19-րդ դարերում ռուսական նվաճումների ժամանակ քրիստոնեության քարոզումը նշանակալից դեր էր խաղում:

Խազարական խաքանությունում, առնվազն 9-րդ դարից սկսած, բացի իշխող դասը կազմող հուդայականություն ընդունած թյուրքերից, վկայված է ինչպես քրիստոնյաների, այնպես էլ մահմեդականների առկայությունը, սակայն ակնհայտ է, որ հեթանոսական ցեղային կրոնները նույնպես լայն տարածում ունեին, և այժմ էլ կենդանի են տարածաշրջանի ժողովուրդների բանահյուսության և ավանդական սովորույթների մեջ: Հարավի մուսուլմանական կայսրությունների ձեռքում իսլամը հզոր զենք է եղել:

Ռուս և ուկրաինացի հողագործների վերաբնակեցումը Կուբանում և Թերեքի առափնյա բերրի հողերում վերաբերում է 16-րդ դարին, սակայն, ամենայն հավանականությամբ, մինչև Եկատերինա II-ի գահակալությունը այն սահմանափակ է եղել:

18-րդ դարի առաջին կեսին կաբարդիները, որոնք չերթեզների արևելյան ճյուղն են կազմում, Հյուսիսային Կովկասի գերիշխող ուժն էին և իրենց ազդեցությունն էին տարածում շրջապատի ցեղային հանրույթների մեծ մասի վրա, առավելապես ցածրադիր վայրերում: Այնուամենայնիվ, առավել հեռավոր լեռնցիներին քիչ թե շատ հաջողվել էր անկախությունը պահպանել: Խոսքը հատկապես վերաբերում է չեչեններին, որոնք մեծամասամբ աղքատ գյուղացիներ էին, հիմնականում՝ անասնապահներ:

18-րդ դարի ռուսական արշավանքներից հետո նրանց վիճակը արագորեն վատացավ: Սկիզբ առավ երկարատև հակամարտությունը Կովկասի լեռնցիների և ռուսների միջև: Ռուսաստանի դեմ մղվող պայքարում իսլամը և մահմեդական եղբայրակցությունները գաղափարական զենք էին դարձել:

1780-ական թթ. չեչենների հոգևոր առաջնորդ շեյխ Մանսուրին հաջողվեց դուրս գալ ռուսների դեմ, հատկապես Չեչնիայում ու Դաղստանում: Որպես գաղափարական զենք օգտագործելով շարիաթը՝ Մանսուրն ու նրա կողմնակիցները դուրս եկան ընդդեմ ռուսների ու տեղացի հողատերերի, որոնց արտոնությունների հիմքում ընկած էին ավանդական ցեղային օրենքները՝ ադաթը: Հնարավոր է, որ Մանսուրը գործել է Օսմանյան Թուրքիայի դրոյմամբ՝ հանդիսանալով վերջինիս գործակալը: Մանսուրը պարտություն կրեց և մահացավ աքսորում՝ Սանկտ Պետերբուրգում 1791 թ., բայց կրկին պատերազմ բռնկվեց մեկ սերունդ անց, երբ ցեղային միություններն ավելի ազդեցիկ մի առաջնորդի գտան՝ դաղստանցի Շամիլին: Նրա վերջին պարտության հետևանքը մահմեդական ցեղերի զանգվածային գաղթն էր Հյուսիսային Կովկասից դեպի Օսմանյան կայսրություն:

Վերաբնակների ամենամեծաքանակ խումբը եկել էր Չերքեզիայից և այսօր էլ մեծ թվով չերքեզներ կան Թուրքիայում:

1917 թ. հեղափոխության և նրան հաջորդած քաղաքացիական պատերազմի ընթացքում իսլամը քաղաքական մեծ ուժ դարձավ, այն էլ ոչ միայն բուլղարիկների դեմ պայքարում: Հետաքրքիր է կրոնական և քաղաքական առաջնորդ Ուզուն Հաջիի ասույթը. «Ես պարան եմ հյուսում՝ կախելու համար և՛ ուսանողներին, և՛ ինժեներներին, և՛ մտավորականներին, այսինքն՝ բոլոր նրանց, ովքեր ձախից աջ են գրում»:

Իսլամական եղբայրակցությունները, հատկապես Նաղշբանդի Օրդենը, թվում է, իրենց գլխավոր հենարանն էին գտել Կենտրոնական և Հյուսիսարևելյան Կովկասի հեռավոր դաշտավայրերում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նրանք պատասխանատու էին ինգուշ-չեչենների և թյուրքական բալկար ու կարաչայ ցեղերի դասալքության համար: Այս ժողովուրդները վերաբնակեցվեցին Միջին Ասիա, իբրև թե որպես պատիժ գերմանացիների դեմ պատերազմին չմասնակցելու համար: Հավանական է նաև, որ Խորհրդային կառավարությունը, որն այդ ժամանակ զգուշանում էր Թուրքիայի հետ զինված ընդհարումից, չափազանց վտանգավոր էր համարում մոլեռանդ մահմեդական համայնքների գոյությունը թուրքական սահմանին այդքան մոտ:

1950-ական թթ. վերաբնակեցման հրամանագիրը չեղյալ հայտարարվեց և Չեչեն-Ինգուշական Ինքնավար Հանրապետությունը վերականգնվեց:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հյուսիսային Կովկասի ժողովուրդները կանգնեցին նոր փորձությունների առջև, որոնք ողբերգություն դարձան բազմաթիվ ժողովուրդների համար:

Այսպիսով, սույն դասախոսությունից պարզվում է, որ հազարամյակներ շարունակ Յիուսիսային Կովկասը եղել է էթնիկական տարբեր խմբերի մի իսկական խառնարան, որն ապրում էր իրեն հատուկ համակեցական օրենքներով: Վերջիններս իրենց հերթին էլ ավելի էին խորացնում աշխարհագրական բարդ միջավայրում ապրող ցեղերի հասարակական-մշակութային կապերը և թույլ չէին տալիս համախմբել ազգակից ցեղերի ուժերը՝ դուրս գալով ցեղային կազմավորումների շրջանակներից:

**Դասախոսություն 3՝ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ և ՅՄՐԿՈՎԿԱՍՈՒՄ**

Հանգուցային բառեր. գիր, արձանագրություն, ժայռապատկերներ, մեհենագրեր, գրավոր մշակույթ, պատմական Հայաստան, «գծային գիր»

Սույն դասախոսությունում ներկայացվում է Այսրկովկասում գրավոր մշակույթի զարգացման պատմությունը, ինչը տարբեր հազարամյակներում ունեցել է իր պատմական առանձնահատկությունները, որոնք մասնագիտական գրականության մեջ շատ դեպքերում ստացել են ոչ միարժեք և հաճախ իրարամերժ բացատրություններ:

Կովկասը, մասնավորապես Այսրկովկասը, գիր ու դպրություն ճանաչող հնագույն աշխարհագրական կենտրոններից է: Այս մասին վկայում են հետևյալ հանգամանքները: Առաջին հերթին խոսքը վերաբերում է Ուրարտուի ժամանակագրական և տարածքային շրջանակներում գործածություն ունեցող մեհենագիր (հիերոգլիֆ) արձանագրություններին: Ուրարտական շրջանի շուրջ երկու տասնյակ հիերոգլիֆներ նմանակներ կամ զուգահեռություններ ունեն հրապարակված ժայռապատկերներում, և նույն քանակության տարբերակումներ կան հայոց միջնադարյան ձեռագրերում պահպանված նշանագրերի ցանկերում: 5-4-րդ հազարամյակից մինչև Ուրարտու ու Քրիստոսի ծննդյան հազարամյակի սկիզբ եղել, ճանաչվել ու մասնակի գործածություն է ունեցել գրության այդ համակարգը: Ըստ երևույթին, բավարար զարգացման չի հասել, ուստի և ուրարտական արքաները իրենց արձանագրությունները կազմել ու փորագրել են հին Արևելքի սեպերի համակարգով, բայց իրենց լեզվով:

Վերջերս պատմական Հայաստանի և հարակից շրջանների տարածքում պահպանված և առեղծվածային ծագում ու բովանդակություն ունեցող արձանագրու-

թյունների միջից տիպաբանական-պատկերային հիմքի վրա առանձնացվեցին գրության ինքնուրույն համակարգ և գործածության որոշակի ոլորտ ենթադրող արձանագրություններ: Այս՝ պայմանականորեն զծային կոչված գրերի կամ նշանների մեջ կան թե՛ ժայռապատկերների, թե՛ մեհենագրերի հետ նույնացող կամ ընդհանուր միավորներ: Մասնագիտական գրականության մեջ տեղական «զծային գրի» այս նմուշները ենթադրաբար թվագրվում են Ք. ա. III-ի հազարամյակներով, ուստի եզրակացվում է, թե ժայռապատկերներից մինչև զծային գիրն ու ուրարտական մեհենագրերը մինչերվանդունյան Յայաստանի տարածքում գրավոր մշակույթ է եղել՝ առանց ընդհատման:

Գրավոր մշակույթի զարգացման պատմության մեջ կարևոր փուլ է Ուրարտու կոչված կազմավորման տարածքում կիրառվող սեպագրությունը: Անկախ այդ սեպագրության լեզվի գործածության ընդհանուր-խոսակցական կամ զուտ արքունական-պաշտոնական լինելուց, ծավալուն տարեգրություններ ու պատմողական տեքստեր ներկայացնելը, որպիսիք արդեն բազմիցս հրատարակվել են դիվանի տեսքով, ապացույց է զարգացած գրային մշակույթի ու համակարգի առկայության: Պահպանված բառային փոխառությունները թույլ են տալիս վստահ խոսել գրավոր մշակույթի տեղական՝ կովկասյան ավանդույթի մասին:

Մ. թ. ա. 6-րդ դարից մինչև մ. թ. 4-րդ դարը ներառյալ Կովկասում և նրան հարող տարածքներում գրավոր մշակույթը ավանդված է բացառապես ոչ տեղական լեզուներով: Այսօր կարող ենք խոսել այդ տարածքում գործածված հունարեն, արամեերեն, լատիներեն, պահլավերեն լեզուների և նրանցով գրված հիշատակարանների մասին: Ինչո՞վ բացատրել գրավոր մշակույթի այսպիսի շեշտակի շրջադարձը էթնիկական

նկարագրի առունով էական փոփոխության բացակայության պարագայում. գաղափարագիր և վանկագիր համակարգերի անկատարությամբ ու հնչյունային գրի անցնելու անկարելիությամբ (բայց այդ առունով արամեական-պահլավական գրի համակարգն էլ կատարյալ չէր), թե՞ հետուրարտական շրջանում այդ լեզուներն ու դպրության համակարգերը գործածող հանրությունների և կազմավորումների քաղաքական-մշակութային ազդեցության ծավալի մեծացումով: Այսինքն՝ կովկասյան բազմէթնիկ միջավայրում տեղի ունեցավ մի տեսակ մշակութային համահարթում՝ մանավանդ հելլենիզմի ոլորտ ընդգրկվելով: Ուրարտական շրջանի գրավոր հիշատակարանները, գրեթե առանց բացառության, պաշտամունքային-պատերազմական և շինարարական բովանդակություն ունեն, մինչդեռ փոխարինելու եկած լեզուներն ու գրության համակարգերը անհամեմատ լայն կիրառություն են վկայում (տապանագրերից մինչև գեղեցիկ գրականություն): Ուրեմն այս շրջանում հելլենիզմի հաստատմամբ փոփոխություն է կրում նաև գրավոր խոսքի գործառությունը: Այդ իրողությունը ապացուցող փաստերից մեկն էլ Հերմես և Ապոլոն աստվածներին երկրորդող կամ կրկնող գիտության, դպրության և պերճախոսության հովանավոր Տիր աստծո ներկայությունն է կովկասյան դիցարանում: Ազաթան-գեղոսի տեղեկությամբ Տիրի մեղյանը գտնվում էր Արտաշատի ճանապարհին և կոչվում էր նաև «Դիւան գրչի Որմզդի»: Որ հիրավի դպրության այդ պաշտպանը կար և վրաց հեթանոսական դիցարանում, կարելի է վստահանալ հին վրացական «Տիրիսկանի» և «Տիրիսդիմի» ամսանունների ստուգաբանությամբ:

Հելլենիզմի շրջանում մշակութային դաշտի ընդարձակումը նպաստավոր եղավ նաև նոր վարդապետության՝ քրիստոնեության քարոզչության

համար: Նոր կրոնի քարոզչությունը պահանջում էր Ս. Գրքի, մանավանդ Նոր Կտակարանի թարգմանություն Այսրկովկասի ժողովուրդներին հասկանալի լեզվով, քանի որ տեղական լեզուները՝ հայերեն, վրացերեն, աղվաներեն, որքան էլ ընդհանրություններ ունենային, հիմնովին տարբեր կառուցվածք ունեին: Այստեղ զանգվածային կրողներ ունեցող լեզուներից ոչ մեկը lingua franca չէր, ուստի սպասելի էր, որ քարոզչությունը տարվեր քրիստոնյա Արևելքի գիր ու գրականություն ունեցող լեզուներից մեկով՝ ասորերենով, հունարենով կամ պարսկերենով: Աղբյուրների վկայությամբ ողջ չորրորդ դարը Հայաստանում (նաև Վիրքում և Աղվանքում) քարոզչությունը օտարալեզու էր, և բացառությամբ սակավաթիվ մարդկանց, նախարար կամ շինական՝ ոչ ոք ոչինչ չէր հասկանում, որովհետև հելլեն և ասորի «գրագիտության արվեստից զուրկ էին»:

Չորրորդ դարի մշակութային այս իրավիճակը՝ հասկանալի լեզվով գրականության անհրաժեշտություն, բայց չգոյություն, բացատրելու փորձերի մեջ ուշագրավ երկու ենթադրություն կա. նախ՝ կիրառվել է բանավոր թարգմանության ավանդույթ, երբ ասորերեն կամ հունարեն կանոնական տեքստը կարդացվել է հայերեն (հավանաբար այդպես էլ Վիրքում՝ վրացերեն, Աղվանքում՝ աղվաներեն կամ գարգարերեն): Ապացույցը Ս. Գրքի որոշ հատվածների կրկնական թարգմանություններից բացի, նման իրավիճակի՝ հեթերոէպիկ տեքստերի առկայությունն է արամեա-պարսկական միջավայրում, երբ արամեերեն գրությունը կարդալիս հնչում է պարսկերեն: Այս տեսության հիմնական զարգացնողներն են Ս. Օրմանյանը և Գ. Սարգսյանը: Ենթադրվում է, որ Գրիգոր Լուսավորչից սկսած մինչև Մաշտոց պիտի ստեղծվեր ու անհրաժեշտաբար ստեղծվել է օտարալեզու հայ գրականություն կամ, նույնիսկ, օտարագիր հայերեն գրականություն: Այս

տեսակետի հետևորդների մեջ ամենից ավելի փաստարկվածը Լևոն Խաչիկյանի ուսումնասիրությունն է, ուր նա մերժում է նախամաշտոցյան հայալեզու գրականության գոյությունը և փաստարկում օտարալեզու հայ գրականության առկայությունը:

Վրացական (ավելի շուտ՝ արևելավրացական) պարագան այլ է, եթե նկատի ունենանք վրացագիտության մեջ այսօր համոզմունք դարձած դրույթը, ըստ որի, եթե ոչ մ. թ. ա. 7-րդ կամ 3-րդ դարերում, ապա գոնե մ. թ. 4-րդ դարում գոյություն ուներ վրացական ազգային գիր ու դպրություն: Այս դրույթները զուտ հայեցողական են, և փաստական հիմնավոր ապացույց չունեն: Աղվանական այբուբենի մասին կարելի է ասել, թե իրոք գոյություն է ունեցել և սերնդակից է մյուս երկու այբուբենների: Օտարալեզու քարոզչության անարդյունավետությունը և տեղական ընդհանրական լեզվի չգոյությունը հարկադրեցին ընտրել երեք լեզուներով երեք ինքնուրույն գիր ու դպրություն ստեղծելու ուղին: Դատելով Կորյունի և մյուս աղբյուրների տեղեկություններից՝ հույն և ասորի մշակութային կենտրոններն ու Արևելյան եկեղեցու կարևորագույն աթոռները (Անտիոք, Կեսարիա, Երուսաղեմ) ոչ միայն չհակառակեցին, այլև նպաստեցին (Բարսեղ, Յոսիանոս, Դանիել ևն): Փաստորեն ազգային լեզուներով դպրություն ստեղծելը եկեղեցու ազգայնացման առաջին լուրջ քայլն էր:

Կորյունի «Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի» շնորհիվ հայոց այբուբենի ստեղծողը, ստեղծման ժամանակն ու պարագաները լիովին հայտնի են: Ինչ վերաբերում է վրաց և աղվանից այբուբեններին, ապա վերստին արժե հիշեցնել այն իրողությունը, որ 5-րդ դարից առաջ Վրաստանում և Աղվանքում գրված արձանագրությունները բոլորը օտարալեզու և օտարագիր են: Եթե

տեղական գիր ու դպրություն լինել մինչև այդ, ապա կարող էինք նմուշ ունենալ:

Այսպիսով, ներկայացված նյութը թույլ է տալիս հասատատել, որ անկախ գիտական հարցադրումներից և տարբեր ենթադրություններից՝ Հայկական լեռնաշխարհը հազարամյակներ շարունակ եղել է գրի և դպրության կենտրոններից մեկը: Վրաց և աղվանից գիրն ու դպրությունն էլ մեծապես կրել են հայոց հոգևոր մշակույթի խորը ազդեցությունը:

**Դասախոսություն 4՝ «ԱԼԲԱՆԻԱ», «ԱՂՈՒԱՆՔ»,
«ԱՌԱՆ» ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՏՈՒԳՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Հանգուցային բառեր. մեկնաբանություններ, բացատրություններ, ստուգաբանություն, տեղանուն, հռոմեացիներ, անտիկ հեղինակներ

Խորհրդային Միության կործանումից հետո Արևելյան Այսրկովկասի պատմությունը էլ ավելի մեծ չափով շարունակվեց կեղծվել ադրբեջանցի ուսումնասիրող-ների կողմից: Հատկապես Աղվանքի կամ Կովկասյան Ալբանիայի պատմությանն առնչվող ամխտիր բոլոր հարցերը պահանջում են պատմագիտական լուրջ քննություն, որը պետք է բխի միայն գիտության շահերից: Սույն դասախոսությունում ներկայացվում են «Ալբանիա», «Աղվանք», «Առան» տեղանունների ստուգաբանությունները, ինչը կարևոր նշանակություն ունի Արևելյան Այսրկովկասի էթնիկական և լեզվական պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

«Ալբանիա» և «ալբանացիներ» տերմինները՝ որպես նշված երկրի ու այն բնակեցնող ցեղերի անվանումներ, առաջին անգամ պատմության մեջ մեզ են հասել Պոմպեոսի Կովկասյան արշավանքներից հետո՝ հանրահայտ Ստրաբոնի միջոցով: Բայց նա, գործածելով «Ալբանիա» և «ալբանացիներ» անվանումները, չի բացատրում ո՛չ դրանց ծագումը, ո՛չ նշանակությունը: Այդ անում են ավելի ուշ շրջանի անտիկ հեղինակները, որոնց պարզաբանումները, սակայն, կրում են առասպելների պատմական մեկնաբանությունների բնույթ և հիմնված են երկրի բնակիչների արտաքին հատկանիշների նկարագրական բացատրությունների վրա: Այդպիսի բացատրությունների հիմքում ընկած է «Ալբանիա» տեղանվան

մեկնությունը լատինական «albus-սպիտակ» բառից, որ տրվել է նրա բնակչությանը իբր վերջինիս սպիտակահեր լինելու պատճառով, և դա էլ պայմանավորել է երկրամասի «Ալբանիա» անվան ծագումը: Օրինակ, Պլինիոս Ավագը գրում էր, որ «Ալբանիայում ծնվում են գորշակապտավուն աչքերով մարդիկ՝ մանկությունից սպիտակահեր, գիշերներն ավելի լավ տեսնող, քան ցերեկը»:

Անտիկ հեղինակների կողմից «Ալբանիա» և «ալբանացիներ» զուգակցությանը տրված այս բացատրությունները միանգամայն ընդունելի են համարվել հետագա հեղինակների ու հետազոտողների կողմից: Որոշ ուսումնասիրողներ բառի հիմքում տեսնում են լատիներեն նույն «albus-սպիտակ» բառի արմատը և տեղանունը մեկնաբանում որպես «Սպիտակ երկիր»՝ երկրի անվանադիր համարելով հռոմեացիներին: Ուսումնասիրողների մեկ այլ խումբ էլ, քննարկվող անվան արմատում նույն ձևով տեսնելով «alp», «alb» բառը, սակայն այն մեկնաբանելով կելտական «լեռ», «բարձր» իմաստով ու, համադրելով լեռնային մակերևույթ ունեցող և հնում նույնպես «Ալբանիա» կոչվող Շոտլանդիայի, Իտալիայի «Ալբանական» անվանք հայտնի լեռների, Բալկանների արևմտյան մասում գտնվող նույնանուն «Ալբանիա» երկրի հետ, «Ալբանիա» տեղանունը բացատրել են որպես «լեռների երկիր»: Օրինակ, Բ. Ուլուբաբյանը երկրի անվանադիրներ է համարում Կովկաս հասած կելտերին և անունը կապում Եդիշեի հիշատակած հոնական ցեղերից մեկի՝ խայլանդուրների հետ՝ վերջինս մեկնաբանելով կելտական «highlander-լեռնաբնակ» նշանակությամբ:

«Ալբանիա» անվան մի ուրիշ, բոլորովին այլ մեկնաբանություն է առաջարկում Յու. Յուսիֆովը: Ենթադրելով, որ նշված տեղանվան սկզբում

պատմականորեն եղել է շնչեղ «Յ» հնչյունը, որի հետևանքով այն նախապես «hal» էթնիկական անվան և «ba» ու «ո» վերջածանցների միացման հետևանքով հնչել է «halban» ձևով, նա ի վերջո անվան ծագումը կապում է «halb»-ի ցեղանվան հետ և տեղանունը մեկնաբանում որպես «hal»-երի երկիր:

Չունահռոմեական «Ալբանիա» տեղանունը առաջացել է հայերեն «Աղուանք» անվանումից և գործածվել է որպես աշխարհագրական անվանում՝ ցույց տալով հարավում՝ Կուր գետի, հյուսիսում՝ Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի, արևելքում՝ Կասպից ծովի, արևմուտքում՝ Ալազան գետի միջև ընկած տարածքը: Չայերեն «Աղուանք» տեղանվան ստուգաբանությամբ առաջինն զբաղվել է Մովսես Խորենացին: Անվան հիմքում դնելով զուտ հայկական «ալու», «աղու», այսինքն՝ «դուրեկան», «քաղցր», «անոյշ», «համեղ» բառը՝ նա գտնում է, որ երկրամասն իր անվանումը՝ «Աղուանք», ստացել է այդ տարածքը ժառանգած Չայկ Նահապետի սերունդներից՝ Սիսակի մեղմ ու հաճելի, «աղու» բնավորության պատճառով: Նույնը կրկնում է Մովսես Կաղանկատվացին, բայց սխալմամբ Առանին է վերագրում Սիսակի բնավորության գծերը և նրա հետ կապում «Աղուանք» տեղանվան ծագումը՝ առիթ տալով նրա՝ իբր «Առան» երկրի անվանադիրն ու աղվանացիների նախահայրը լինելու մասին կանխակալ եզրակացությունների:

Մասնագիտական գրականության մեջ առավել տարածված է այն կարծիքը, ըստ որի՝ հայերեն «Աղուանք» անվանումը հունահռոմեական «Ալբանիա» անվան տառադարձումն է հայերենի օրենքներից համապատասխան, նրա հայացված ձևը: Չ. Սվազյանը գտնում է, որ տեղանվան հիմքը կազմող «աղու» կամ «ալու» բառերն իրենց նշանակությամբ բնութագրում են երկիրն իր բարենպաստ, մեղմ ու դուրեկան

բնակլիմայական պայմաններով, որոնց մասին այդքան շատ են գրում անտիկ, հին հայկական ու արաբական աղբյուրները: Հիմքում ունենալով «աղու» բառը՝ երկրանվան մյուս բաղադրիչը կլինի «անք» մասնիկը, որը, ուսումնասիրողի կարծիքով, հայերենում հայտնի «եանք» («ե»-ի անկմամբ) հոգնակիակերտ վերջածանցն է և «աղու» բառի հետ կազմել է «Աղու+/ե/անք-Աղուանք» տեղանունը: Նշված վերջածանցը, ավելանալով բառի հիմքին, ցույց է տալիս մարդկանց պատկանելությունը որևէ խմբի, տոհմի, բնակության վայրի կամ երկրի: Հ. Սվազյանի կարծիքով, խնդրո առարկա անունը նշանակում է «աղու երկրի մարդիկ», «հաճելի, դուրեկան բնություն ունեցող երկրի բնակիչներ»: Ծագելով որպես մարդկանց որևէ խմբի բնակության վայրը ցույց տվող անվանում՝ այն աստիճանաբար ձեռք է բերում տեղանվան նշանակություն և սկսում է արտահայտել որոշակի աշխարհագրական տարածք, այն է՝ Աղվանից երկիրը: Հետևաբար, «Աղուանք» տեղանունը չունի էթնիկական ծագում:

Բ. Հարությունյանը, ուսումնասիրելով «Աղուանք» անվան բացատրությունը, այն մեկնաբանում է որպես «արգավանդ դաշտի երկիր» (Ուտիք անունը նշանակում է «հովիտներ», Արցախն էլ՝ «Քամոտ անտառ»):

Ինչ վերաբերում է Առան անվանը, Ն. Սառը այն բացատրում է դաղստանյան լեզուների օգնությամբ: Ըստ նրա, դաղստանյան ցեղերից մեկի՝ լաքերի լեզվում պահպանվել է «առ» բառը՝ «դաշտավայր» նշանակությամբ, իսկ խնալուղների լեզվում խնդրո առարկա բառը նշանակում է «ջերմ», «տաք» և գործածվել է որպես «հարթավայր», «ձմեռային արոտավայր» հասկացությամբ: Առան անվանը դաղստանյան ցեղերի լեզուներով նույն «ջերմ»,

«տաք», նաև «հարթավայր» նշանակությունն է վերագրում և Յու. Յուսիֆովը:

Այսպիսով, անկախ ստուգաբանություններից, թեման կարելի է ամփոփել աղվանագետ Ա. Հակոբյանի այն եզրահանգումով, որ «աղվան» եզրի տակ անհրաժեշտ է հասկանալ ո՛չ կազմավորված էթնոսի, սակայն Աղվանից թագավորության հիմնական բնակիչների՝ էթնոհամախմբման որոշակի աստիճանի հասած էթնոպոտեստար (հավաքական) ընդհանրության ներկայացուցչին, իսկ «աղվաներենի» տակ՝ էթնիկական համախմբման վերջնական աստիճանին այդպես էլ չհասած ցեղային էթնոսներից մեկի (Ստրաբոնի ժամանակ դրանց թիվը 26 է եղել)՝ անկասկած Կովկասյան լեզվաընտանիքի Լեզգիական լեզվախմբին պատկանող այն լեզուն, որի համար Մաշտոցի և Բենիամինի կողմից ստեղծվեց 52 տառից բաղկացած այբուբենը:

Այսպիսով, ներկայացված նյութը թույլ է տալիս ենթադրել, որ նշված տեղանուններն ունեցել են հնդեվրոպական ծագում և առաջին հերթին պետք է բացատրվեն հայերեն լեզվի ստուգաբանական հիմքի վրա: Ընդ որում, Արևելյան Այսրկովկասում շատ ավելի ուշ հայտնված եկամուտ թյուրքական ցեղերի լեզվի միջոցով կատարված ստուգաբանությունները կամայական են և չունեն գիտական հիմնավորում:

**Դասախոսություն 5՝ ԱՂՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
«ԱՂԻՐԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ»՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴՐՂԱՊԱՏՏՈՒ**

Հանգուցային բառեր. աղվանագիտություն, հակա-պատմական հայեցակարգ, հայկական պետություն, Մեծ Հայք, հայոց եկեղեցի, պատմական փաստեր

Սույն դասախոսությունում կոնկրետ օրինակներով ներկայացվում են ադրբեջանցի աղվանագետների գիտական քննության չդիմացող կեղծիքները և նենգափոխումները, որոնց նպատակն է պատմական հիմնավորում տալ ոչ միայն Արցախի, այլև Սյունիքի նկատմամբ Ադրբեջանի քաղաքական հավակնու-թյուններին:

Վերջին ժամանակներս Ադրբեջանում աղվանագիտության բնագավառում կատարած իր ուսումնասիրություններով աչքի է ընկնում Ֆ. Մամեդովան: Նրա շոշափած խնդիրները լայն են ու բազմաբնույթ. Աղվանքի հասարակական ու քաղաքական կյանքի պատմությունը հին և վաղ միջնադարյան շրջաններում, պատմական աշխարհագրությունը, էթնիկական կազմը, գաղափարախոսությունն ու մշակույթը, «Աղվանից աշխարհի պատմության» լեզվի ու հեղինակի կամ հեղինակների և ընդհանրապես Աղվանից գրականու-թյան հարցերը և այլն:

Իր աշխատություններում Ֆ. Մամեդովան իրեն է վերագրում հայ գիտնականների (Հ. Մանանդյան, Ն. Ադոնց, Ս. Երեմյան և ուրիշներ) կողմից վաղուց պարզաբանված բազմաթիվ հարցերի առաջին հայտնագործողի դերը, զարգացնում և խտացված գույներով ներկայացնում ադրբեջանցի այլ ուսումնասիրողների կողմից առաջ քաշած սուտ ու սխալ կարծիքները: Դրանք առանձնապես ցայտուն են դրսևորվել Ֆ. Մամեդովայի «Աղվանքի քաղաքական պատմությունն ու պատմական աշխարհագրությունը» (մ.

թ. ա. III-մ.թ. VIIIդդ.)» աշխատությունում: Հեղինակը այն ներկայացնում է որպես «պատմական Ադրբեջանի», որ, նրա կարծիքով, ընդգրկել է Հայոց Սյունյաց, Ուտիք, Արցախ և Փայտակարան նահանգները ու այն հնում բնակեցրած և ադրբեջանական ժողովրդի կազմավորումից հարյուրամյակներ առաջ էթնիկապես անհայտացած աղվանացիների՝ իբրև ադրբեջանացիների նախահայրերի քաղաքական պատմության ու պատմական աշխարհագրության ուսումնասիրություն:

Հակապատմական այս հայեցակարգն անցկացնելու համար նա հորինում է մի շարք կեղծ ու պատիր դրույթներ՝ հանգեցնելով հետևյալին.

1. Աղվանքը, իր պետականության կազմավորումից սկսած (իբր մ. թ. ա. III դարից մինչև VIII դարի կեսերը), իրենից ներկայացրել է մի ամբողջական, կենտրոնացված, քաղաքական-պետական միավորում և ամբողջ այդ ժամանակաշրջանում անփոփոխ անփոփված է եղել մի սահմանագծում, որ հյուսիսում անցել է Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայով, արևելքում՝ Կասպից ծովով, արևմուտքում՝ Ալազան, իսկ հարավում՝ Արաքս գետերով:

2. Ազգությամբ իբր աղվանացիներ են հայ պատմիչներ Մովսես Կաղանկատվացին, Կիրակոս Գանձակեցին, Վանական վարդապետը, բանաստեղծ Դավթակ Քերթոզը, գրավոր օրենսդրության հիմնադիրներ՝ «Դատաստանագրքերի» հեղինակներ Դավիթ Ալավկա որդին ու Մխիթար Գոշը, իսկ նրանց ստեղծագործությունները՝ Աղվենի ու Պարտավի ժողովների կանոնների հետ մեկտեղ՝ աղվանական գրականության նմուշներ, որոնք, իբրև թե, Ֆ. Մամեդովայի հորինած արտահայտությամբ, «հայկական ավանդույթի» ուժով իրենցն են համարել հայերը:

3. Տիգրան Մեծից հետո հայկական պետությունն այլևս գոյություն չուներ, հետևաբար և էական չէ անդրկովկասյան ժողովուրդների շարքում հայ ժողովրդի, նրա պատմության ու մշակույթի դերը:

Այսպիսի եզրակացությունների հեղինակը հանգել է ոչ թե աղբյուրների հաղորդումների գիտական ու անաչառ վերլուծության միջոցով, այլ կանխակալ մոտեցմամբ՝ կեղծելով փաստերը, դրանք հարմարեցնելով իր նպատակներին, ժխտելով պատմականորեն հավաստի հաղորդումները, շրջանցելով առավել նշանակալիները, հավելումներ անելով: Նախապես իրեն ապահովագրելով անտիկ ու հայ հեղինակների հաղորդումների հակասական ու որպես այդպիսին պատմականորեն անճիշտ լինելու մասին հայտարարություններով՝ Ֆ. Մամեդովան հակասությունների արդյունք է հայտարարում աղբյուրների իրեն ոչ ձեռնտու բոլոր տվյալները և իր տեսակետները կառուցում սեփական վերածնունդների հիման վրա:

Զափազանց տարված լինելով Աղվանքի ու աղվանացիների մասին անտիկ ու հայ հեղինակների հաղորդումների իսկությունը ժխտելու անկասելի մոլուցքով՝ Ֆ. Մամեդովան բոլորովին չի մտահոգվում գիտական լրջության պակասի համար: Նա հանգիստ խղճով մի կողմից կարող է հայտարարել, թե Նախիջևանը հայկական մարզ չի կարող լինել, քանի որ Բուզանդը այդ մասին ակնարկ անգամ չունի, իսկ մյուս կողմից էլ աղբյուրների, մասնավորապես, «Աշխարհացոյցի» ուղղակի տեղեկությունները Նախիջևանի՝ որպես Հայաստանի մարզերից ու քաղաքներից մեկի մասին որակել Հայաստանի իրական պատմությանը կատարելապես անհամապատասխան: Կորյունի հաղորդումներն էլ Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին ողջ Հայաստանում, այդ թվում և Գողթնում, ըստ նրա, չի նշանակում, թե

վերջինս հայկական մարզ էր և այլ նման օրինակները վկայում են հեղինակի անլրջության մասին:

Առաջնորդվելով այս մեթոդով ու իր տնտեսական ու քաղաքական զարգացմամբ հարևան երկրներից հետ մնալու «վիրավորական» կարծիքը Աղվանքի նկատմամբ ժխտելու բուռն ցանկությամբ՝ Ֆ. Մամեդովան Աղվանքի համար ուղղակի հորինում է իրեն ցանկալի, երևակայական մի պատմություն, որտեղ այն համարվում է Մեծ Հայքին ու Վիրքին համազոր, երբեմն էլ նույնիսկ առաջնակարգ երկիր:

Ֆ. Մամեդովայի ելակետային սխալներից է մինչև VIII դարը գրեթե անփոփոխ սահմաններով Աղվանքի կենտրոնացված պետություն տեսնելը: Չընդունելով, որ V դարի կեսերին հաստատված մարզպանական վարչակարգի, ապա և բուն Աղվանքի նախկին տարածքում առաջացած մի շարք քաղաքական, ինքնուրույն կազմավորումների առաջացման հետևանքով Աղվանից պետությունը անդառնալիորեն վերացվեց, նա ի դեմս Միհրանյան իշխանների տեսնում է այն իշխանական հարստությունը, որն Աղվանքում իբրև թե դարձավ թագավորական իշխանության ավանդույթների անշեղ շարունակողը:

Ֆ. Մամեդովայի կեղծիքների համակարգում առանձնահատուկ տեղ են գրավում աղվանական գրին ու գրականությանը վերաբերող բաժինները: Նրա համար ընդունելի չէ աղվանական այբուբենի հիմնադիր անվանել Մեսրոպ Մաշտոցին: Ցանկանալով աղվանական այբուբեն ունենալ Մաշտոցից էլ առաջ և անտեսելով Կորյունի ու Խորենացու հայտնի տեղեկությունները աղվանացիների համար «նշանագրեր հորինելու» կամ «ստեղծելու» մասին՝ Մաշտոցին հատկացնում է միայն ու միայն գոյություն ունեցած այբուբենի վերականգնողի ու վերափոխողի դեր:

Ֆ. Մամեդովայի «հայրենասիրական» զգացմունքներն էլ ավելի են հորդաբուխ դառնում, երբ խոսք է գնում Աղվանից գրականության մասին: Նա իր պարտքն է համարում աղվանացիների համար գրականություն հայթայթել և բնավ չչփոթվելով, որ այդպիսիք մեզ հայտնի չեն, դրանք ուղղակի վերցնում է հայ մատենագրության շարքից և սառնասրտորեն հայտարարում աղվանական գրականության նմուշներ, իսկ դրանց հեղինակներին՝ աղվանական տարեգիրներ: Հայ պատմագրությունից այս միտումի զոհեր են դարձել շատ պատմիչներ և մշակույթի ու հասարակական-քաղաքական գործիչներ, որոնց մի մասը անվանապես թվարկվեց վերևում: Նրանց հայտարարելով աղվանական գրականության, մշակույթի և հասարակական-քաղաքական գործիչներ՝ Ֆ. Մամեդովան առաջնորդվում է լոկ այն սկզբունքով, որ նրանք ծնվել և իրենց հասարակական-քաղաքական ու գրական գործունեությունը ծավալել են այն աշխարհագրական վայրերում, որոնք պատմական իրականությանը հակառակ անարդարացիորեն գտնվել են Ադրբեջանի կազմի մեջ: Նրա փուլթն էլ չէ, որ այդ վայրերը անհամեմատ ուշ են դարձել այսօրվա Ադրբեջանի մասեր, իսկ այդ ստեղծագործությունները գրված են հին հայերենով՝ գրաբարով: Ավագ կեղծարարի՝ Ջ. Բունիյաթովի օրինակով նման հարցերի լուծման գործում ստեղծագործության լեզվին նշանակություն չտալով, նա պատրաստվել է նաև դրան և ընթերցողին է հրամցնում արդեն պատրաստի, բայց և կատարելապես անհեթեթ մի բացատրություն: «Պատմական ճակատագրի առանձնահատկության ուժով,-գրում է նա,-Աղվանից տեղական ծագման գրավոր հուշարձանները մեզ են ներկայացվել հին հայերեն լեզվով»՝ իրեն նեղություն չպատճառելով վեր հանել այդ «առանձնահատկությունները», քանի որ իրեն էլ է հայտնի, որ հնարովի պատճառաբանություն-

ները չեն կարող հիմնավորվել: Գրքում կարմիր թելի նման անցնում է Մեծ Հայքի ստորադասման միտումը Աղվանքին, միտում, որ մինչև օրս չի նկատվել հայրենական ու արտասահմանյան ոչ մի պատմաբանի աշխատությունում: Նսենացնելով Հայաստանի դերն ու նշանակությունը և նրան հակադրելով Աղվանքին՝ Ֆ. Մամեդովան պատմական սխալներով է ներկայացնում նաև Աղվանքի պատմությունը: Նրա կարծիքով, Աղվանքին գրեթե չեն առնչվել Հռոմի և Պարսկաստանի միջև ընթացող կռիվները, որ այն, ի տարբերություն Հայաստանի, որը փաստորեն դարձել էր Հռոմի պրովինցիաներից մեկը, պահպանել էր իր ինքնուրույնությունն ու, նույնիսկ, ավելի արտոնյալ վիճակում էր գտնվում: Նա թաքցնում է Աղվանքի պատմության այնպիսի փաստեր, ինչպիսիք հռոմեական զորքերի մշտական գոյությունն էր Աղվանքում, Աղվանքի թագավորական գահի հռոմեական դրածոների կարգումը և ուրիշ իրողություններ, որոնք նա դատապարտելի է համարում Հայաստանի համար: Բերված փաստերը կոծկվել են, որովհետև չեն հարմարվում Ֆ. Մամեդովայի այն կարծիքներին, ըստ որոնց Աղվանքը Հայաստանի ու Իբերիայի նման չէր նվաճվել հռոմայեցիների կողմից, որ այն իբր «առանց թագավորական իշխանության մնացել է ընդամենը 463-487թթ.» և այլն: Նա Աղվանքի համար պատկերում է այսպես կոչված «մաքուր», առանց ներգործությունների պատմություն, ուստի հայտարարում է. «Հայաստանի ու Աղվանքի իրավիճակի ուսումնասիրությունը համոզում է նրանում», որ «Մեծ Հայքը ինչպես քաղաքական, այնպես էլ աշխարհագրական հասկացությամբ ոչ մի ձևով կապված չէր Աղվանքի ճակատագրի հետ»: Հարցին այսպես մոտենալով՝ նա մեղադրում է Կ. Վ. Տրեվերին, թե վերջինս Աղվանքի պատմությանը նվիրված իր աշխատությունում «շատ է անհարկի ուշադրություն

դարձնում Հայաստանի պատմությանը»: Սա պատմության ուսումնասիրության ըմբռնում է: Դա երկու հարևան երկրների պատմության իսկական խեղաթյուրում է, քանի որ Մեծ Հայքի ու Աղվանքի պատմությունները ընդհանուր շատ կողմեր ունեն, և վերջինիս պատմությունը առանց առաջինի չի կարող լիարժեք համարվել:

Աշխատությունում Ֆ. Մահմեդովան անդրադառնում է նաև աղվանից եկեղեցու պատմության հարցերին և ամեն գնով փորձում այն ներկայացնել որպես առաքելական, հայոց եկեղեցուց անկախ ու նրանից առաջնային հոգևոր հաստատություն: Այդ նպատակով նա մինչև իսկ կրոնական ավանդույթներն է դարձնում պատմական հարցերի լուծման հիմք, երբ այսօր դրանց չեն դիմում անգամ եկեղեցական գործիչները:

Գրքին կցված են քարտեզներ, որոնցում, ինչպես և պետք էր սպասել, Աղվանքը պատկերված է արհեստականորեն ընդարձակված մի հսկայական տարածության վրա՝ հարավ-արևմուտքում հազիվ չընդգրկելով ողջ Սևանա լիճը: Ավելին, նրանցում ցույց են տրված նույնիսկ ազդեցության ոլորտներ, որ իբր ունեցել է Աղվանքը հյուսիսում մ. թ. ա. III-ի դդ. և հարավում մ.թ. I-IIIդդ.: Ընդ որում, քարտեզներում շատ աշխարհագրական վայրեր ներկայացված են ոչ թե իրենց պատմական, այլ անհամեմատ ավելի ուշ, երբեմն էլ պատմության շատ կարճ ժամանակահատվածում գործածված թյուրքական անվանումներով: Այսպես, Սևանա լիճը, որ հնում կոչվում էր Գեղամա լիճ կամ Գեղարքունյաց ծով, քարտեզներում անվանված է Գյոկչա, Լոփնաս գետը՝ Աղստաֆաչայ, Տուս գետը՝ Թուուզայ, Գետառուն՝ Աղրիչայ, Սեբոջ գետը՝ Կարասու, Որոտանը՝ Բարգյուշատ և այլն:

Ֆ. Մամեդովան իրեն է համարում «խոստակ», «ավագ», «կրտսեր», «սպարապետ», «ռամիկ»,

«շինական», «աղախին» և այլ նմանօրինակ շատ սոցիալական տերմինների ստուգաբանությունների առաջին հեղինակը: Նա փաստորեն կողոպտում է հայ նշանավոր պատմաբաններ Յ. Մանանդյանին, Ն. Աղոնցին, Ս. Երեմյանին, Ա. Յակոբյանին, Թ. Ավդալբեգյանին և ուրիշների, որոնք վաղուց են քննության նյութ դարձրել նշված տերմինները և տվել նրանց համապատասխան ու հանգամանալից մեկնաբանությունները: Այսպիսով, ինքը, լինելով գիտական անբարեխղճության օրինակ, դեռ վիրավորվածի կեցվածք ընդունելով, մեղադրում է ուրիշ ուսումնասիրողների՝ դրանք իբր իրենից արտագրելու համար:

Աշխատությունը լի է հակապատմական ու հակագիտական ուրիշ շատ այլ դրույթներով, մասնավորապես Աղվանքում մ. թ. I դարում Արշակունյաց հարստություն լինելու, Նախիջևանն ու Սյունիքը աղվանական մարզեր և աղվանական ցեղերի բնակության հիմնական վայրերից մեկը հանդիսանալու, դրանք իրենց հայ բնակիչներից զրկելու, ուտիներին, գարդմանացիներին, ծավդեացիներին աղվանական ցեղեր կարծելու, սյունյաց և արցախյան առանձին լեզուներ գոյություն ունենալու և ուրիշ շատ այլ նման սխալ թեզերով:

Ըստ գրքի վերջաբանի՝ աշխատությունը Աղվանքի պատմության հարցերի բազմակողմանի քննության փորձ է, բայց այն կարելի է հանգիստ խղճով սրբագրել «Աղվանքի պատմության հարցերի բազմակողմանի աղավաղումների փորձ»:

Ըստ էության, աշխատությունում խտացված գույներով ի մի են բերվել մինչ Ֆ. Մամեդովան այլ ուսումնասիրողների կողմից առաջ քաշված և որոշակի նպատակի ուղղված դրույթները: Իսկ այն նպատակամղված է նախկին Աղվանքի սահմանները Ադրբեջանի սահմաններին համապատասխանեցնելուն,

աղվանացիներին այսօրվա ադրբեջանցիների նախնիներ հայտարարելուն և պատմական գիտության միջոցով ներկայուն Ադրբեջանի կազմում փաստացիորեն գտնվող նախկին հայկական մարզերի վարչական կացությանը հիմք տալուն և ողջ Սյունիքն իր պատմական սահմաններով Ադրբեջանի կազմում ներգրավելու համար հող նախապատրաստելուն: Դրանով էլ հենց աշխատությունը ուշադրություն է գրավել: Գրքի լույս ընծայման առթիվ թերթերում ու պարբերականներում տպագրվել են դրական գրախոսականներ, որոնք էլ վկայում են ադրբեջանական մտավորականության շրջաններում տիրող անառողջ տրամադրությունների մասին: Վերջիններիս արտահայտության բարձրակետն է Ի. Ալիևի գրախոսականները, որտեղ նա, անթաքույց բավականությամբ ընգծելով հայ պատմաբանների շուրջը Ֆ. Մամեդովայի ստեղծած անբայրացականության մթնոլորտը և իր հերթին նրանց՝ սկսած Խորենացուց ու Բուզանդից և վերջացրած ժամանակակից պատմաբաններով (Ս. Երեմյան, Աս. Մնացականյան, Բ. Ուլուբաբյան, Շ. Սմբատյան, Յ. Սվազյան) «պատմության կեղծարարներ» հայտարարելով, հրճվանքով բացականչում է, թե «նրանք բոլորն էլ Ֆ. Մամեդովայից ստացել են իրենց վաստակի համեմատ» և, որ վերջինս իբր քարը քարի վրա չի թողել այն վիթխարի կեղծ կոնցեպցիայից, որ ստեղծել են հայ պատմաբանները, և «գոհունակության մեծ զգացումներով» իր համերաշխությունն է հայտնում գրքի հեղինակի հետ նրա հիմնական տեսակետներում՝ այսպիսով դառնալով այս հազվագյուտ ազգային եսանդության ու սնապարծության արտահայտություն հորինվածքի հեղինակակիցը:

Ֆ. Մամեդովայի աշխատությունը իր առջև դրված խնդիրներով ու էությամբ հակագիտական է, պատմության ուսումնասիրության մեթոդաբանությամբ

անհարիր, ամբողջովին տոգորված է հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև թշնամություն հրահրելու միտումով, ծառայում մի խումբ կեղծ մտավորականների թշնամական դիտավորություններին, ուստի հանուն անաղարտ գիտության չպետք է տեղ գտնի գիտական աշխարհում:

Այսպիսով, սույն դասախոսության նպատակն է ցույց տալ ադրբեջանական պատմագրության կողմից հայոց և ադվանից պատմության հարցերի նենգափոխումը և խեղաթյուրումը: Ադրբեջանցի պատմաբանների «գիտականորեն հիմնավորված հայեցակարգերը» անմիջականորեն ուղղորդվում են Ադրբեջանի իշխանությունների կողմից և պայմանավորված են զուտ զավթողական նպատակներով:

**Դասախոսություն 6՝ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՐԿՈՒ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Հանգուցային բառեր. գաղափար, ազատագրում, տիտղոսաշար, միացյալ թագավորություն, հայազգի հեղինակներ, վրաց թագավորներ

Հայ-վրացական դարավոր կապերը միշտ էլ կարևոր են եղել երկու ժողովուրդների համար: Սակայն այդ կապերը ոչ միշտ են եղել բարեկամական և պայմանավորված են եղել տվյալ ժամանակաշրջանի քաղաքական հանգամանքներով: Սույն դասախոսությունում ներկայացվում է հայ-վրացական միացյալ թագավորության գաղափարը և այդ գաղափարը կյանքի կոչելու վրաց թագավորների քաղաքական քայլերը և նպատակները, որոնք ոչ միանշանակ էին ընդունվում հայ աշխարհիկ և հոգևոր գործիչների կողմից:

Հայ-վրացական միացյալ թագավորության գոյության հնարավորության գաղափարը կարող էր սկիզբ առնել 9-րդ դ., ձևավորվել 10-11-րդ դդ. հայ Բագրատունիների գերակայության, իսկ այնուհետև 12-13-րդ դդ.՝ վրաց Բագրատունիների քաղաքականության արդյունքում: Հետագա դարերում, ընդհուպ մինչև 18-րդ դ. վերջ, հնարավոր է՝ այն շարունակել է իր գոյությունը բազմապիսի դրսևորումներով ու ընկալումներով: Սակայն միասնական կարծիք ու հստակություն չկանման պետության ընկալման և սահմանումի մեջ:

Գագիկ I-ի և մնացածների Հայոց և Վրաց թագավոր լինելու փաստը լոկ ինքնահորջորջում չէր և արձանագրվել է իր գահակալության ընթացքում ժամանակի առավել հայտնի ճարտարապետական կառույցների վրա փորագրված արձանագրություններում՝ որպես համընդհանուր ճանաչում ունեցող կարգավիճակ:

Ա. Հովհաննիսյանը իրավացիորեն շեշտում է, որ «11-13-րդ դարերում վրաց Բագրատունիները հանդես էին գալիս Հայաստանում ոչ որպես նվաճողներ, այլ որպես գահաժառանգորդներ, որոնց գենքի հաղթանակին, որչափ այն ուղղված էր օտարակալության դեմ, հայ ժողովուրդը ակտիվորեն ընդառաջում և աջակցում էր: Վերամիավորելով Հայաստանն ու Վրաստանը՝ վրաց Բագրատունիները չէին դիտում Հայաստանը որպես իրենց անձնատուր եղած մի երկիր, այլ որպես իրենց տոհմին պատկանած մի տիրույթ, որի ավատատիրական ազատությունները վերականգնվել էին հայ և վրացի ուժերի համատեղ ջանքերով»: Ս. Երեմյանի ընդհանրացումով՝ «Հայկական հողերի՝ Վրացական ավատատիրական միապետության կազմի մեջ գտնվելու ժամանակաշրջանը ազդել է նաև հաջորդ սերունդների մտածողության վրա հետագայում ևս»:

14-րդ դ. ևս վրաց Բագրատունիները փորձում են մոնղոլ-թաթարական լծի դեմ պայքարում հենվել հայ-վրացական զինակցության վրա: Երևանն անգամ երբեմն ընկալվում էր Վրաստանի մեջ:

Հայազգի հեղինակները միշտ չէ, սակայն, որ միանշանակ պաշտպանել են վրաց իշխանությունների վարած արտաքին կամ ներքին քաղաքականությունը և քննադատել են Վրաց թագավորների անհեռատես գործողությունները:

Եթե Թովմա Մեծփեցին 15-րդ դարում նախատական դիրքորոշում է դրսևորում Վրաց Բագրատունի իշխանությունների վարած անկայուն ու ոչ համարձակ քաղաքականության նկատմամբ, ապա այդ ևս թելադրված էր Հայոց այն ակնկալություններով, հուսախաբությամբ, կրած տառապանքներով և առաջարկությունների չիրականացմամբ, որ կապվում ու պայմանավորվում էին Վրաց իշխանությունների դիրքորոշման հետ:

Միջնադարում, ցավոք, շարունակվում էր նաև հայ բնակչության ներգաղթը դեպի Վրաստան: Վրաց թագավորներն էլ անգամ նույն 15-րդ դ. (Գեորգի, Ալեքսանդր, Բագրատ, Կոնստանտին և այլք) իրենց տիտղոսաշարում պահպանում էին Հայոց թագավոր ներկայանալու հավակնությունը՝ որպես հիմնավորում ունենալով հիմնականում Հայաստանի հյուսիսային հատվածի (վրացական աղբյուրներում անվանված Սոմխիթ=Հայք, Հայաստան) Վրաստանի կազմի մեջ լինելու պարագան, այնպես էլ նաև վերիուշ-ձգտումը Վրաստանի ավելի ընդարձակ սահմանների մասին: Սիմոն I-ը 1592 թ. հրովարտակում իր տիտղոսների թվարկման մեջ նշում է ըստ ազգությունների ու տարածքների. «Մեր, աստուածապսակ թագաւորաց թագաւորի, կամօքն Աստծոյ Ափխազաց, Վրաց, Կախից, Ռանից, Հայոց թագավորի, Շանում եւ Շիրուանում եւ ամբողջ Արեւելքում եւ մինչեւ Արեւմուտք հաստատուն տիրակալութիւն ունեցողի...»:

17-րդ դ. վերջին քառորդին ևս Սոմխիթը շարունակում էր մնալ Վրաստանի կազմում և արձանագրվել որպես առանձին միավոր: 18-րդ դ. առաջին տասնամյակներին Վրաց իշխողներին հաջողվում է Պարսից գերակայության տակ իրենց ազդեցությունը կամ իշխանությունը տարածել նաև Երևանի ու Ղազախ-Շամշադինի վրա. Երևանում՝ որպես Պարսից արքունիքի կողմից նշանակված բեկլարբեկ, իսկ Ղազախ-Շամշադինում՝ որպես ավատական սեփականատեր: Վրաց իրականության մեջ ավանդույթը խախտելու վճռական քայլ կատարվեց 18-րդ դ. երկրորդ կեսին, ինչը արձանագրվել է Հերակլ II-ի կողմից՝ 1770 թ. ապրիլի 5-ով թվագրված, և Ռուսաստանի արքունիք ուղարկված Վրաստանի մարդահամարի ցուցակի մեջ, երբ Վրաստանի կազմում գտնվող Սոմխիթը անվանվում էր արդեն Ստորին Քարթլի

(Ստորին Վիրք), ինչը և շարունակվում է մինչև այսօր՝ վրաց հետազոտողների կողմից հետադարձ ժխտելով նաև նախորդ դարերի մտայնությունն ու իրականությունը՝ վերածելով այդ բանավիճային խնդրի:

18-րդ դ. երկրորդ կեսին Վրաց թագավորները իրենց ստորագրություններում և տիտղոսաշարում այլևս դադարում են Սոմխիթ=Յայաստանի արձանագրումը, սակայն այդ բնավ չի նշանակում, թե նրանք դադարում են հավակնություններ ունենալ Յայաստանի նկատմամբ: Նման հավակնություններ դրսևորում է անգամ Արևմտյան Վրաստանի, այն է՝ Իմերեթի թագավոր Սողոմոն I-ը, որը հավակնում էր «Ողջ Վրաստանի» թագավոր հորջորջվելու գալթակությունը: Անշուշտ, այս հանգամանքը առաջացնում է Յերակլ II-ի դժգոհությունը, քանի որ նրա տիտղոսի մեջ, որպես հիմնական տիրույթ, նշվում են միայն Քարթլին և Կախեթը, ու հաջորդում էր երբեմն՝ «իշխող Երևանու, Գանձակու և այլն» ձևը, իսկ ավելի հաճախ՝ միայն «և այլոց» արտահայտությունը կամ մասնավորեցվում՝ «Բորչալու-Ղազախ» հավելումով: Իրավիճակը, սակայն, մասամբ փոխվեց, երբ ընդառաջելով Շ. Շահամիրյանի ծրագրերին՝ Յերակլը նախ Վրաց իշխանի տիտղոս, իսկ ապա և Լոռին նվիրեց Շ. Շահամիրյանին՝ որպես Վրաստանի ենթակայության տակ գտնվող Յայաստանի մի հատված: Եթե վրաց իրականության մեջ 18-րդ դ. երկրորդ կեսին սկսել էր նվազել ու մթազնել Սոմխիթի դերը սակավամարդ լինելու հետևանքով, ապա հայ-վրացական միացյալ պետության ստեղծման համար տեսական հիմնավորումների, ծրագրերի ու առաջարկների արձարծումները կրկին վերակենդանացնում են Սոմխիթ=Յայաստանի գաղափարը: Ինչպես նախորդ դարերում, 18-րդ դ. ևս հանուն Յայաստանի հայ գործիչները ընդառաջում էին վրաց հավակնություններին:

Ի տարբերություն հայոց դիրքորոշման, վրաց վերաբերմունքը հայոց նկատմամբ գնալով առավել կոշտանուն էր: Գեորգի XII-ը 1800 թ. հունվարի սկզբներին Էջմիածնի միաբանությանը գրած իր նամակում որպես «Հայոց թագավոր» փորձում է միջամտել Հայոց կաթողիկոսի ընտրությունների խնդրին և առաջադրել Հովսեփ Արղությանի թեկնածությունը:

Հայ պատմագիտության մեջ տարածում էր ստացել նաև այն տեսակետը, թե 1720-ական թթ. սկզբներին, «տակավին արշավանքից առաջ Պետրոս ցարը բանակցությունների մեջ էր մտել հայ և վրացի ներկայացուցիչների հետ՝ խոստանալով կազմակերպել հայ-վրացական պետություն Ռուսաստանի հովանու ներքո»: Իրոք, Պետրոս I-ը մտադիր էր Երևանը հանձնել Վախթանգին: Սակայն չպետք է մոռանալ, որ ցարը «ընդառաջում էր հայ և վրաց ղեկավարների «ազատագրման» գաղափարին, որչափ դա կարող էր նպաստել Կասպիականի ավազանում Ռուսաստանի ամրանալուն»: Ուստի և այդ գաղափար-խոստումը Պետրոս I-ի կողմից զուտ դիվանագիտական քայլ կարող է դիտվել և ոչ ավելին: Ռուսաստանը, ինչպես 18-րդ դ. առաջին քառորդին, այնպես էլ դարի վերջին քառորդին հմտորեն օգտագործում էր մահմեդական լծի դեմ հայ-վրացական համագործակցության հնարավորության հույսը և անկախություն ձեռք բերելու երազանքը:

Հայաստանի ազատագրման նպատակով եթե հայազգի գործիչները ունեին որոշակի ակնկալիքներ Վրաստանի կողմից ռազմաքաղաքական օժանդակություն գտնելու հարցում և մշտապես ձգտում էին նպաստել Վրաստանի առաջընթացին, ապա Վրաց իշխանությունները, օգտագործելով հայոց ազգային ակնկալիքները, մտահոգված էին միայն Վրաստանի տնտեսական, ռազմաքաղաքական ու մշակութային զարգացման խնդիրներով: Հայաստանի քաղաքական

անկախության վերականգնումի խնդիրները չէին կարող մտնել և չէին մտնում վրաց գործիչների նախագծումների մեջ: Վրաստանը ընդամենը փորձում էր ընդարձակել իր սահմանները՝ ընդգրկելով Հայաստանի տարածքները, իր տիրապետությունը հաստատել Հայաստանում և Հայոց նկատմամբ ազդեցությունը պահպանելու նպատակով ներկայանալ որպես Հայոց հովանավոր և ապաստան:

Հայոց օժանդակությունը փնտրելու խնդրում հակադրվում էին վրաց-ռուսական շահերը, իսկ Հայաստանի մահմեդական իշխանությունները Հայոց ազատագրական ձգտումների մեջ, բնականաբար, տեսնում էին միայն իրենց տիրապետության վախճանը:

Այսպիսով, սույն դասախոսության նպատակն է ցույց տալ բնիկ հայկական հողերի նկատմամբ վրացական պետության տարածքային հավակնությունների առաջացման նախադրյալները, որոնք իրագործվեցին Թիֆլիսում 1921 թվականի նոյեմբերի 6-ի հայ-վրացական սահմանի մասին պայմանագրով, որով Հյուսիսային Լոռին, Ախալցխայի ու Ախալքալաքի գավառներն անցան Վրաստանին:

Դասախոսություն 7՝ ԻՍԼԱՄԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ (20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ)

Հանգուցային բառեր. ազգ, ազգայնականություն, վահաբիզմ, ազգային գաղափարախոսություն, ազգային ինքնագիտակցություն, իսլամական կազմակերպություններ, քաղաքական միասնություն

Բազմէթնիկ Կովկասի համար կրոնը միշտ էլ ունեցել է բացառիկ նշանակություն, քանի որ կրոնական ինքնագիտակցությունը հատկապես Յուսիսային Կովկասի ժողովուրդների համար եղել է կարևոր համակեցական գործոն: Սույն դասախոսությունում ներկայացվում է Կովկասի ժողովուրդների համար իսլամի՝ որպես համակարգակազմիչ գործոնի նշանակությունը և դրա հետևանքները տարածաշրջանի համար:

Ազգի և ազգային գաղափարախոսության ձևավորման գործում կարևոր դեր է խաղում կրոնը: Պատմական իրականությունը ցույց է տալիս, որ կրոնի և ազգային ինքնագիտակցության միջև գոյություն ունի որոշակի կապ: Օրինակ, նույն վրացիների համար ազգային ինքնագիտակցության վերելքը սկսվեց 608 թվականից, երբ վրաց եկեղեցին անջատվեց հայոց եկեղեցուց:

Որոշ հեղինակներ գերադասում են խոսել էթնիկական կրոնների մասին: Որոշակի իրավիճակներում այս կամ այն ժողովուրդը ընտրում է էթնիկական կրոն՝ զգալով իր տարբերությունը հարևան ժողովուրդներից և պետություններից: Օրինակ, իռլանդացիները անգլիացիներից հեռու մնալու համար չզնացին Ռեֆորմացիայի ճանապարհով և շարունակեցին նույնականացնել իրենց կաթոլիկության հետ: Պատմության մեջ կան նաև այնպիսի օրինակներ, երբ տարբեր կրոնների ընդունումը բերել է երկու տարբեր ազգությունների ձևավորմանը (օրինակ, խորվաթները՝ կաթոլիկություն, սերբերը՝ ուղղափառություն):

Ինչ վերաբերում է իսլամին, ապա ԽՍՀՄ կործանումից հետո այն Կովկասում ձեռք բերեց աշխարհաքաղաքական գործոնի նշանակություն, որը որոշում է Ռուսաստանի արտաքին քաղաքական ռազմավարությունը ամբողջ հարավային ուղղությամբ: Հիմնական խնդիրն այն է, թե արդյո՞ք իսլամը Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի որոշ ազգային հանրապետությունների համար կդառնա համակարգակազմիչ գործոն:

Իսլամը, չնայած իրենից ներկայացնում է վերազգային կրոնական համակարգ, հաճախ օգտագործվում է եթե ոչ որպես ազգային ինքնագիտակցության, ապա ազգային գաղափարախոսության և ազգայնականության հիմնական բաղադրատարր: Իսլամը ոչ թե մեկ ազգի կամ ժողովրդի, այլ մահնեդականների համաշխարհային համայնքի («ունմա») կրոն է, որի համար քաղաքական սահմաններ գոյություն չունեն: Այլ կերպ ասած, իսլամին բնորոշ է տոտալ բնույթը: Այն նաև վերին աստիճանի ներքին մեծ լիցք պարունակող և դինամիկ կրոն է:

Կովկասում իսլամը ներկայացված է ինչպես երկու հիմնական ուղղություններով՝ շիիզմ և սունիզմ, այնպես էլ այլ հոսանքներով՝ սկսած չափավոր ավանդականներից մինչև ծայրահեղականները: Ներկայումս Կովկասում կան բազմաթիվ մուսուլմանական բարեգործական, մշակութային-լուսավորչական, քաղաքական կազմակերպություններ: Իսլամական կազմակերպությունների նշանակությունը և դերը հատկապես ուժեղանում է Ադրբեջանում: Այդ կազմակերպությունները, հովանավորվելով Սաուդյան Արաբիայի, Պակիստանի, Իրանի և այլ մուսուլմանական երկրների կողմից, բացահայտորեն հանդես են գալիս տարածաշրջանի բոլոր ժողովուրդների միավորման պանիսլամական գաղափարներով՝ ա) Ռուսաստանին

Հյուսիսային Կովկասից դուրս մղելու, **բ)** տարածաշրջանում մեկ իսլամական պետություն ստեղծելու, **գ)** Ադրբեջանին Հայաստանի դեմ պատերազմում օգնելու կոչերով:

Ռուսաստանում նույնպես ողջ պետության մասշտաբով գործում են բազմաթիվ նմանատիպ (օրինակ, Իսլամական կոմիտեն, Ռուսաստանի մուսուլմանների միությունը, «Նուր» շարժումը, Վերածննդի իսլամական կուսակցությունը), ինչպես նաև ռեզիոնալ կազմակերպություններ (օրինակ, «Իսլամական ուղի»-ն Չեչնիայում, Դադստանի իսլամական-դենոկրատական կուսակցությունը և այլն): Չնայած այդ կազմակերպությունները առանձին դեպքերում հանդես են գալիս նոր խնդիրների առաջադրմամբ, օրինակ, միավորել իսլամական աշխարհի և Ռուսաստանի ուժերը արևմտյան գլոբալիզմին և նոր աշխարհակարգին դիմագրավելու համար, այդուհանդերձ, դրանց մեծ մասը, ահռելի ֆինանսական միջոցներ ստանալով Սաուդյան Արաբիայից, ձգտում է ուժեղացնել ինչպես այդ երկրի, այնպես էլ լայն առումով իսլամի ազդեցությունը: Այդ նպատակին հասնելու համար անվճար բաժանվում էին Ղուրանի միլիոնավոր օրինակներ, կառուցվում մզկիթներ և իսլամական տարբեր մշակութային կենտրոններ, իսկ արդեն 1992-1994 թթ. Չեչնիայի, Կարարդինա-Բալկարիայի, Կարաչայ-Չերքեզիայի, Դադստանի, Բաշկիրիայի տարածքներում սաուդյան կազմակերպությունները ստեղծում են իսլամի «պաշտպանների» ռազմական ճամբարներ:

Ինչպես ամբողջ իսլամական աշխարհում, այնպես էլ հետխորհրդային տարածքի արևելքում փորձեր են կատարվում զուտ քաղաքական նպատակներով սինթեզել իսլամը և ազգայնականությունը: Դրանք ամբողջության մեջ դարձել են գաղափարախոսական

հենահարթակ, որի անկյունաքարը Կովկասի անջատվողականությունն է և Ռուսաստանի լիակատար դուրս մղումը Կովկասից: Այդ նպատակի իրագործման համար հատկապես ակտիվ էր 1997 թ. Գոռգնիում ստեղծված «Իսլամական ազգ» հասարակական-քաղաքական շարժումը: Ազգայնականները սովորաբար դիմում են իսլամին որպես ազգային արժեքների աղբյուրներից մեկի, առաջնորդվելով այն սկզբունքով, որ «յուրաքանչյուր քաղաքակրթության հետևում կանգնած է կրոնը»: Որպես կանոն, իսլամական ազգայնականները հանդես են գալիս մահմեդական ժողովուրդների բացառիկության քարոզով և ազգայնականությունը օգտագործում են որպես միջոց, օրինակ, Ռուսաստանի կամ արևմուտքի երկրների դեմ պայքարի ճակատ կազմելու համար:

Չեչնիայում աստիճանաբար մեծ ազդեցություն է ձեռք բերում 18-րդ դարի առաջին կեսին Սաուդյան Արաբիայում առաջացած վահաբիզմը, որը դառնում է Սաուդյան Արաբիայի պաշտոնական կրոնական դոկտրինան: Առաջին վահաբականները Յյուսիսային Կովկասում հայտնվեցին 19-րդ դարում, իսկ խորհրդային ժամանակաշրջանում Չեչնիայի տարածքում՝ 1970-ական թվականների վերջերին: Սակայն, պետական օրգանները այն ժամանակ կարողացան չեզոքացնել դրա քարոզիչների գործունեությունը:

Չուտ կրոնական առումով վահաբիզմի մեջ կենտրոնական տեղ են գրավում երկու համակարգակազմիչ բաղադրատարրեր՝ թաքֆիրը՝ մահմեդականներին անհավատության մեջ մեղադրելը, այսինքն՝ վահաբիզմի դրույթները չընդունելը, և ջիհադը, որը հանուն մահմեդական կրոնի տարածման անհավատների դեմ սրբազան պատերազմն է: Տարբերում են ջիհադի երեք մեկնաբանություններ.

1.«Մեծ ջիհադ». յուրաքանչյուր հավատացյալի պայքարն իր հետ, իր կրթերի, զգացմունքների, ներքին թշնամու դեմ, այսինքն՝ սա հոգևոր ջիհադն է:

2.«Ներքին փոքր ջիհադ». պատերազմ հենց իսլամական աշխարհի ներսում, այլ կերպ ասած հավատուրացների դեմ: Սա կոչված է արդարացնելու ուժի գործադրումը ապստամբ փոքրամասնության, ինչպես նաև քաղաքական ընդդիմության նկատմամբ, որոնք չեն ենթարկվում իսլամական պատվիրաններին:

3.«Արտաքին փոքր ջիհադ», որն ուղղված է իսլամական աշխարհից դուրս գտնվող անհավատների դեմ: Վերջինիս համարժեքը թյուրքալեզու ժողովուրդների մեջ դազավաթն է՝ սրբազան պատերազմը, որը կարող է լինել և՛ հարձակողական, և՛ պաշտպանողական:

Գալով Կովկաս՝ վահաբականներն իրենց հետ բերեցին կրոնական մոլեռանդություն ոչ միայն հավատի հարցերում, այլև ծայրահեղ ռադիկալիզմ իրենց քաղաքական և հոգևոր հակառակորդների հետ պայքարում: Վահաբիտները կարճ ժամանակում (1996-1997թթ.) կարողացան յուրացնել Դադստանը և առանձին բնակավայրերում նրանց առաջնորդները խլեցին իշխանությունը՝ հաստատելով իսլամական օրենսդրություն, շարիաթական դատավարություն, իշխանության իրենց օրգանները՝ շուրաները (խորհուրդները): Ա. Մասխադովը փորձեց զսպել ծայրահեղական վահաբականների նկրտումները, որոշ քայլեր ձեռնարկեց այդ ուղղությամբ, բայց վերջին հաշվով նրան չհաջողվեց ճնշել, այդ թվում և վահաբական ընդդիմությունը: Վահաբիզմի հետևորդները չէին էլ թաքցնում իրենց նպատակները՝ ստեղծել Ռուսաստանից անկախ Դադստանի և Չեչնիայի իսլամական պետություն:

Չուտ կրոնական առումով վահաբականների նպատակն այն էր, որ «մաքուր իսլամի» իրենց

մեկնությունը հակադրեին իսլամական մյուս հոսանքներից, առաջին հերթին սուֆիական թարիքատներից (ուսմունքներից), որոնք տարածված էին Հյուսիսային Կովկասում: Նրանց գործունեության հիմնական արդյունքը դարձավ մուսուլմանների միջև թշնամության սերմանումը և պայքարի բորբոքումը: Այդպիսի պայմաններում, անշուշտ, թեև ուշացած, բայց ֆունդամենտալիզմի տարածման վտանգը զգացին նաև տարածաշրջանի աշխարհիկ և հոգևոր առաջնորդները:

Շուտով վահաբիզմը և ծայրահեղական հոսանքները 1998 թվականին Չեչնիայի, Ինգուշիայի, Դաղստանի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների կողմից հայտարարվեցին օրենքից դուրս, քանի որ դրանց գործունեությունը հակասահմանադրական էր: Այս և այլ նմանատիպ գործողությունները, ի զուգակցումն Կովկասի առանձնահատկությունների, ցույց տվեցին, որ Կովկասում տիրող դավանական բազմակարծության պայմաններում այն համոզումները, թե իսլամի շնորհիվ Կովկասը կդառնա քաղաքական մեկ միասնություն, սնանկ է և իրականությունից լիովին դուրս: Օրինակ, կովկասյան իրականության պայմաններում կարծես թե պարադոքս է, որ կովկասյան մահմեդականները, որոնց ճնշող մեծամասնությունը սունիներ են, մերժենում են շիական Իրանին, ոչ թե սունիական Թուրքիային: Իսկ ռուս-չեչենական պատերազմն էլ ցույց տվեց, որ չնայած մահմեդական համերաշխության կոչերին, մահմեդական երկրների մեծ մասը զերծ մնաց չեչենամետ հայտարարություններից և ուղղակի քաղաքական սատարումից:

Իսլամի մասին խոսելիս չպետք է մոռանալ, որ կովկասյան ժողովրդների մեծ մասի կյանքի բոլոր բնագավառները ենթարկվել են արդիականացման և աշխարհիկացման: Նրանց արժեքային համակարգը ենթարկվում է խորն ազդեցությունների ու նրանց մեծ

մասը յուրացնում և ամբողջացնում է համառուսական կյանքի կարևոր կողմերը և հատկանիշները: Սակայն հյուսիսկովկասյան ժողովուրդների համար ամենակարևոր երևույթը այսպես ասած ռուսերենի միջոցով ուժացման ենթարկվելն է: Ընդ որում, Ղուրանի ռուսերեն թարգմանությամբ հրատարակությունները մատչելի են ընթերցողների լայն շրջաններին:

Մյուս կողմից էլ պետք է ուշադրություն հրավիրել այն երևույթի վրա, որ Կովկասում խոսքը գնում է ոչ այնքան իսլամական հավատի սկզբունքների վերածննդի, որքան կյանքի կազմակերպման նորմերի և ամենօրյա վարքի կանոնների մասին, որոնք կազմում են ավանդական ադաթի հիմքերը ընդհանուր տարածաշրջանի շատ ժողովուրդների համար: Հագիվ թե իսլամը Կովկասում կարողանա դառնալ ազգային և քաղաքական կայուն միավորումների հիմք հենց միայն թեկուզ այն պատճառով, որ իսլամը տարածաշրջանում բազմադեմ է (սունիզմ, շիիզմ, սուֆիզմ, վահաբիզմ և այլն): Պատմականորեն առաջացած էթնոազգային, տարածքային, ցեղային, լեզվական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մյուս հակասություններն ու բախումները կովկասյան ժողովուրդների միջև ավելի ուժեղ են, քան թե դավանական դրույթները և արժեքները: Ի վերջո, ինչպես մյուս համաշխարհային կրոնները, այնպես էլ իսլամը իրենց նույնիսկ համապարփակության ուժով չեն կարող ջնջել էթնիկական, լեզվական, քաղաքական և մյուս տարբերությունները մարդկանց ու ժողովուրդների միջև:

Այսպիսով, սույն դասախոսությունը ցույց տվեց, որ արդի աշխարհաքաղաքական զարգացումների և համակեցական նոր արժեքների ձևավորման պայմաններում իսլամը, զոնե արտաքնապես, Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանում չունի այն նշանակությունը և գործնական ազդեցությունը, որպեսզի կարողանա

համախմբել տեղի ժողովուրդներին ընդհանուր գաղափարի ներքո և դուրս մղի Ռուսաստանին տարածաշրջանից: Հայաստանի դեմ ուղղված իսլամական միասնության կոչերն էլ բազմաթիվ պատճառներով չեն կարող հայտարարություններից վերածվել գործնական քայլերի:

Դասախոսություն 8՝ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Հանգուցային բառեր. պետականություն, կոնֆլիկտներ, հավակնություններ, կենտրոնախույս, արդիականացում, պատերազմ, ժողովուրդ

Կովկասյան միասնության հնարավորությունը և իրականացումը արդի աշխարհաքաղաքականության ուսումնասիրության կարևոր հարցերից է, քանի որ միասնական Կովկաս ստեղծելու պատմական փորձերը միշտ էլ կշարունակվեն: Նման փորձերի իրականացումը կարևոր հետևանքներ կարող է ունենալ նաև Հայաստանի Հանրապետության համար, քանի որ վերջինս չի կարող անմասն մնալ տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխություններից: Սույն դասախոսությունում ներկայացվում են միասնական Կովկաս ստեղծելու կոնկրետ պատմական փորձերը և դրանց հետևանքները Կովկասի ժողովուրդների համար:

Այսրկովկասի երկրների պետականության ձևավորման և ինստիտուցիոնալիզացման գործընթացների և հիմնական ուղղությունների վրա էական ազդեցություն են գործում նրանց համակած էթնոտարածքային բախումները, որոնք նշանակալից չափով բարդացնում և խորացնում են ընդհանուր համակարգային ճգնաժամի հետևանքները հետխորհրդային տարածքի մեծ մասի վրա: Տարածաշրջանի ժողովուրդների փոխադարձ հավակնությունները հանդիսանում են նրանց միջև հարաբերությունների գլխավոր գործոն: Հենց այս միջէթնիկական լարվածությունն էլ կասեցնում է տարածաշրջանի արդիականացման գործընթացները: Այս առումով Կովկասը ընդհանուր շատ եզրեր ունի Բալկանների հետ ամբողջությամբ և նախկին Հարավսլավիայի հետ մասամբ այն հարցում, որ ոչ միայն Եվրոպայի, այլև ամբողջ աշխարհի ամենաանկայուն շրջաններից մեկն է: Տարածաշրջանում

ցանկացած լոկալ բախում կարող է այս կան այն ձևով բերել տարբեր երկրների միջամտությունը՝ դրանով իսկ դառնալով միջազգային ռազմաքաղաքական պրոբլեմների պոտենցիալ աղբյուր: Խոսքն առաջին հերթին վերաբերում է զանազան տեսակի ոչ ազգային ծայրահեղական կազմակերպությունների և խմբավորումների, ինչպես նաև պրոֆեսիոնալ վարձկանների կոնֆլիկտների մեջ ներքաշվելուն: Պատահական չէ, որ Կովկասը համարվում է «ռուսական Բալկաններ» կամ էլ «եվրասիական անկայունության գոտու» առանցքային օղակ, որը ձգվում է Բալկաններից մինչև Հիմալայներ: Տարածաշրջանի ռազմավարական կարևորության հիմնախնդիրներից է դարձել ներպետական և միջազգային կազմակերպված հանցավորությունը, որը հետաքննության շրջանում ձեռք է բերել վիթխարի մասշտաբներ և նշանակություն: Այս համատեքստում ոչ պակաս դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ այսրկովկասյան երկրներում արդեն խորհրդային ժամանակաշրջանում ձևավորվել էր բավականին մասշտաբային սովերային տնտեսություն՝ իր հետևից բերելով սովերային քաղաքականության ձևավորում:

Միջէթնիկական, էթնոտարածքային բախումները նախ և առաջ տեղական ծագում ունեցող երևույթներ են: Այդ բախումներն ունեն տարբեր երեսներ՝ պատմական, քաղաքական, կրոնական, մշակութային, էթնոազգային, սոցիալ-տնտեսական և հատկապես գաղափարախոսական: Առանց չափազանցության կարելի է ասել, որ ներկայիս հակամարտություններն առաջացել են դեռևս լենինյան արտաքին քաղաքականության իրագործման շրջանակներում: Իսկ պատմական, ինչպես նաև արդի միջազգային փորձը ցույց է տալիս, որ էթնիկական, դավանական, տարածքային հակասությունները սրվում և հակամարտության են վերածվում կայսերական

կենտրոնի կամ դաշնային պետության թուլացման, առավել ևս անկման ժամանակ:

Կովկասին դարեր շարունակ բնորոշ է եղել ամբողջականացման և ապամբողջականացման, կենտրոնաձիգ և կենտրոնախույս միտումների օրգանական համակցությունը: Այստեղ ձգողության և հետմղման ուժերը գտնվել են յուրօրինակ դինամիկ հավասարակշռության վիճակում: Ավանդաբար կովկասյան մշակույթի մարդը չէր խորհում համապատասխան սոցիոմշակութային շրջանից՝ համայնք, էթնոս, թեյփ, ջամաաթ և այլն դուրս: Այս մարդու համար քաղաքական, հատկապես ընտրական վարքը պայմանավորված չէ առաջնորդվել Արևմուտքում ընդունված ընտրական չափանիշներով:

Չեփօրհրդային ժամանակաշրջանում կովկասյան տարածքում տիրապետողը ապահնտեգրացիոն, կենտրոնախույս գործընթացներն էին: 20-րդ դարի 80-ական թվականների վերջերից Կովկասը հայտնվեց «խառնակ ժամանակների» վիճակում, որին բնորոշ էր առաջին պլան մղել բազմաթիվ հավակնություններ և հակահավակնություններ ազգային պետականության, պետական-վարչական կարգավիճակի, էթնիկական նույնականացման, տարածքների և այլ հարցերում:

Միասնական Կովկաս ստեղծելու առաջին փորձը տեղի է ունեցել 1917 թ., երբ ստեղծվեց Կովկասյան միավորված լեռնականների միությունը, իսկ 1918 թ. հռչակվեց Լեռնային հանրապետությունը, որի մեջ մտնում էին Դաղստանը, Չեչենո-Ինգուշիան, Օսիան, Կարաչայ-Բալկարիան, Կաբարդան, Աբխազիան, Ադըղեյան: 20-րդ դարի 90-ական թվականների սկզբին ստեղծվում է Կովկասի լեռնական ժողովուրդների կոնֆեդերացիան, որը վերակազմավորվում է Կովկասյան ժողովուրդների կոնֆեդերացիայի: Եթե սա դիտարկենք ոչ թե ինքնիշխան պետական կազմավորում, այլ

տարածաշրջանի ժողովուրդների ինչ-որ ասոցիացիա, համակովկասյան միություն, ապա այն կարող էր լուծել բազմաթիվ հարցեր, որոնք կապված էին լուսավորության հետ, վերականգնել մշակութային և պատմական ավանդույթներն ու հուշարձանները, զարգացնել ազգային լեզուները, գրականությունը և այլն: Այս դեպքում, թերևս, դաշնային իշխանությունները զբաղվեին միայն ֆինանսական միջոցներ տրամադրելով, նյութական, կազմակերպչական աջակցություն ցույց տալով: Սակայն վրաց-աբխազական, վրաց-օսական, օսա-ինգուշական պատերազմները, 1999 թ. ամռանը տեղի ունեցած դաղստանյան իրադարձությունները ցույց տվեցին Կոնֆեդերացիայի ղեկավարության քաղաքական սնանկությունը, անընդունակությունը Հյուսիսային Կովկասի ժողովուրդների առջև ծառայած խնդիրները լուծելու գործում: Գիշտ է, Կոնֆեդերացիայի ղեկավարության որոշ գործողությունների շնորհիվ բազմաթիվ երիտասարդներ կամավորների կարգավիճակով մասնակցեցին վրաց-աբխազական պատերազմին՝ օգնելով Աբխազիային վրացական ագրեսիայից, այդուհանդերձ, լեռնական ժողովուրդների կոնֆեդերացիայի գաղափարը լուրջ հարված էր կրել: Չպետք է մոռանալ, որ ինչպես Ռուսաստանի մյուս ժողովուրդները, այնպես էլ կովկասյան յուրաքանչյուր ժողովուրդ և հանրապետություն անդառնալիորեն կապված է Ռուսաստանին ոչ միայն ընդհանուր տնտեսական, քաղաքական, մշակութային միակցություններով, այլև առանձին-առանձին, ինչն էլ ավելի արդյունավետ զարգացման հնարավորություն է տալիս: Ընդ որում, առանձին վերցրած հանրապետությունն ավելի մեծ չափով է շահագրգռված Ռուսաստանի հետ իր կապերի ամբողջությամբ, քան թե անջատ հարաբերություններով մյուս հանրապետությունների հետ անհատական հիմքի վրա: Ներկա իրականության պայմաններում այն

տնտեսական և տարածքային հակասությունները, որոնք գոյություն ունեն Յուլիսային Կովկասի ժողովուրդների միջև, երևակայական են դարձնում տեսանելի ապագայում ինչ-որ միասնական Կովկասի գոյությունը Ռուսաստանից առանձին և նրա կամքին հակառակ: Սակայն հարկ է նշել, որ Ռուսաստանը ոչ միանշանակ է ընդունվում Յուլիսային Կովկասի հանրապետությունների բնակչության տարբեր շերտերի կողմից: Չի բացառվում, որ այս կամ այն ժողովուրդն իր ինքնորոշման իրավունքն իրացնելու համար բացահայտորեն ինչ-ինչ հանգամանքներում զենքը ձեռքին հանդես գա տարածաշրջանում ռուսական ներկայության դեմ: Բացի այդ, Կովկասում կան գործիչներ, որոնք փորձում են իրենց գործողություններն արդարացնել «կայսերական Ռուսաստանի» դեմ հակազդելու փաստարկներով: Մի կողմից էլ իսլամի դրոշի ներքո Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի, Իրանի տարբեր ձևերով թաքնված գործողությունները կարող են միջազգայնացնել տարածաշրջանում առաջացած բախումները:

Վերջին հաշվով 19-րդ դարում տասնամյակներ տևած կովկասյան պատերազմի վտանգը միշտ էլ կա: Սակայն «ընդհանուր կովկասյան պատերազմը» որոշակի պայմաններում կարող է շրջվել «ընդհանուր թշնամուց»՝ «Ռուսական կայսրությունից» և ըստ Թ. Յոբսի մոդելի՝ դառնալ բոլորի պատերազմը բոլորի դեմ: Ընդսմին, նկատենք, որ ցանկացած կովկասյան կոնֆլիկտ իր հետ բերում է նոր խնդիրներ, որոնք ծանրագույն հետևանքներ կարող են ունենալ հակամարտող կողմերի համար: Անկասկած, Չեչենական պատերազմի պատճառները, ընթացքը, հետևանքները պահանջում են ինքնուրույն ուսումնասիրություններ: Իսկ այն թեզը, թե Չեչնիայով սկսվեց Ռուսաստանի այսպես ասած բալկանացումը, Չեչնիայի օրինակը «դոմինոյի

էֆեկտով» կտարածվի Հյուսիսային Կովկասի մյուս հանրապետություններում, չպետք է միակողմանի համարվի, քանի որ Չեչնիայի անկախությամբ Հյուսիսային Կովկասում առաջ եկավ երրորդ ուժը: Թվում էր, թե Չեչնիայի փաստացի անկախության մի քանի տարիների ընթացքում հյուսիսկովկասյան մյուս հանրապետությունները նույնպես կփորձեն անկախանալ Ռուսաստանից, բայց ստացվեց հակառակը: Երրորդ ուժը ստիպեց մյուս հանրապետություններին ավելի մերձենալ Ռուսաստանին: Իրականությունը ցույց տվեց, որ Ռուսաստանը մնում է միակ իրական հիմքը, որն ունակ է համախմբել և հաշտեցնել Կովկասի բազում ժողովուրդներին հանուն համընդհանուր բարիքի: Եթե տեսականորեն ենթադրենք Ռուսաստանի հեռացումը Հյուսիսային Կովկասից, ապա դժվար չէ կանխատեսել այն արյունոտ հետևանքները, որոնք առաջ կգան տարածաշրջանում այն բանի գիտակցումից, որ անկախության արդյունքում տարածքային հարցը կբարձրանա այլ մակարդակի վրա:

Կովկասի կամ նույնիսկ նրա առանձին շրջանների միասնության ձգտման նպատակը տեսանելի ապագայում կմնա որպես իդեալ տեղի ժողովուրդների համար: Բավական է մի թռուցիկ հայացք նետել Կովկասի պատմության վրա, և պարզ կդառնա, որ Կովկասյան ժողովուրդները առանձին վերցրած բացարձակապես կապված չեն շահերի ոչ մի ընդհանրությամբ, ինչ մնաց միասնական պետության շրջանակներում գոյակցեն: Այդ ժողովուրդները մինչև Ռուսական կայսրության մեջ մտնելը հզոր հարևանների և մեկմեկու կողմից անընդհատ ենթարկվել են ահավոր հարվածների, և միայն Ռուսական կայսրության, ապա ԽՍՀՄ-ի ժամանակ հնարավոր դարձավ տարածաշրջանի միասնականությունը:

Միաժամանակ այսրկովկասյան երկրներում չլուծված խնդիրների լուծումը և տնտեսական կայուն հարաբերությունների հաստատումը իրենց հերթին բարենպաստ պայմաններ կստեղծեն ամբողջ կովկասյան տարածաշրջանի խաղաղ և փոխադարձ արդյունավետ զարգացման համար: Պատահական չէ, որ միասնական խաղաղ Կովկասի կամ անգամ այսրկովկասյան պետությունների միության ստեղծումը ժամանակ առ ժամանակ կապում են Մետաքսի մեծ ճանապարհի հետ:

Այսպիսով, սույն դասախոսությունը ցույց տվեց, որ միասնական Կովկաս ստեղծելու արտաքին ուժերի ջանքերը չեն կարող իրականություն դառնալ, քանի որ պատմականորեն այդ միասնության համար չկան իրական նախապայմաններ:

Մյուս կողմից էլ ռուսական քարոզչությունը Կովկասում Ռուսաստանի «պատմական առաքելության» վերաբերյալ, խիստ հակասական է և միակողմանի, քանի որ Մոսկվան տարածաշրջանում ուղղորդվում է կայսերապաշտական նկատառումներով:

Դասախոսություն 9՝ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

Հանգուցային բառեր. բարեփոխումներ, հակառուսական, կայսերական, ազգային ինքնորոշում, ազգային պետություն, քաղաքական դեմոկրատիա, տիտղոսակիր ժողովուրդներ

Սույն դասախոսությունում ներկայացվում են ոչ միայն ազգայնականության դրսևորումները Կովկասում, որոնք Կովկասի նման բարդ տարածաշրջանի համար միջէթնիկական բախումների պատճառ հանդիսացան, այլև համակողմանիորեն ներկայացվում է ազգայնականությունը՝ որպես սոցիոմշակութային երևույթ: Դասախոսությունում ներկայացված հարցերը խիստ արդիական են նաև մեր ժամանակներում:

20-րդ դարը իրավամբ համարվում է ազգայնական գաղափարախոսության դարաշրջան: 20-րդ դարի վերջը նույնպես նշանավորվեց ազգայնականության նոր ալիքով՝ ազգային ինքնորոշման գաղափարով և բազմաթիվ նոր ազգային պետությունների ձևավորմամբ: Ազգայնականությունը առնվազն վերջին երկու հարյուրամյակի ընթացքում ծառայում է գաղափարական-քաղաքական հիմնավորում ազգային պետության համար:

Ազգայնականությունը և գաղափարախոսությունը սերտորեն կապված են իրար՝ լրացնելով և խթանելով մեկմեկու: Հավանաբար ճիշտ է Է. Սմիթը, որը հաստատում էր, թե գոյություն ունի ազգայնականության երկու տեսակ՝ քաղաքական, որը բնորոշ է «տերիտորիալ» ազգին, և էթնիկական՝ բնորոշ «էթնիկական» ազգին, այսինքն՝ ճիշտ կլինի այս պարագայում խոսել ազգայնականության երկու ասպեկտների մասին՝ պետական և էթնիկական: Ընդունված է համարել, որ ազգը՝ որպես մարդկային համակեցության ինքնակազմակերպման ձև, սերտորեն

կապված է ժամանակակից տարածքային պետություն-ազգի որոշակի տիպի հետ: Չնայած, անշուշտ, ճիշտ է նաև Վ. Ա. Տիշկովի այն մոտեցումը, որ ազգայնականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ «քաղաքական լոզունգ և մոբիլիզացիայի միջոց, և ոչ թե գիտական կատեգորիա»: Եթե իսկական ազգային պետության տակ հասկանանք մի պետություն, որի բնակչությունը կազմված է միայն մեկ էթնոսից, ապա այն ավելի շուտ բացառություն է, քան թե օրենք: Ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, տարածքային մոտեցումը հազվադեպ է բավարարում ազգային հարցի լուծումը: Ալբանացիները Սերբիայում, հունգարները հարևան պետություններում, քրդերը Իրաքում, Թուրքիայում, Իրանում և Սիրիայում ոչ այլ ինչ են, եթե ոչ Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի հետևանքներ:

20-րդ դարը բնութագրվում է ազգայնականության երեք փուլերի պայթյունով:

1. Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո:
2. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ քայքայվեցին գաղութատիրական կայսրությունները, և Աֆրիկայում ու Ասիայում առաջացան բազմաթիվ անկախ երկրներ:
3. Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում հակակոմունիստական հեղափոխությունների ժամանակաշրջանում, ինչպես նաև խորհրդային դաշինքի և ԽՍՀՄ-ի անկմամբ:

Կովկասյան ժողովուրդների առաջին էթնոազգային հասարակական-քաղաքական կազմակերպությունները Ռուսաստանում հայտնվեցին դեռևս 19-րդ դարի 80-ական թվականներին: Այդ շարժումն ուժեղացավ 1905-1907 թվականներին՝ ռուսական առաջին հեղափոխության տարիներին: Ինչպես Ռուսաստանի տարբեր հատվածներում, այնպես էլ Կովկասում առաջ եկան

կուսակցություններ և շարժումներ, որոնք հանդես եկան անկախության կամ ինքնավարության կոչերով և նույնիսկ եղան մուսուլմանական կազմակերպություններ (օրինակ՝ «Իթթիֆազ», «Դիֆաի»), որոնք ցարական վարչակազմի կովկասյան ներկայացուցիչների դեմ տեռորը հայտարարեցին իրենց գործողությունների հիմնական միջոցներից մեկը:

Փետրվարյան, ապա Յոկոտեմբերյան հեղափոխություններից հետո ազգային շարժումը նոր թափ ստացավ, և եթե սկզբում ազգային շարժումների, կուսակցությունների, կազմակերպությունների (օրինակ՝ Ադրբեջանի ազգային կոմիտեն, Միավորված լեռնականների ժամանակավոր կենտրոնական կոմիտեն, Յյուսիսային Կովկասի և Դաղստանի միավորված լեռնականների միությունը և այլն) մեծ մասի առաջնորդները սահմանափակվում էին միայն ինքնավարություն տալու պահանջով, ապա քաղաքացիական պատերազմների ժամանակահատվածում արդեն կանգնեցին լիակատար անկախություն նվաճելու ճանապարհի վրա: Պետք է նշել, որ բոլշևիկների փորձը ցայտուն օրինակն է այն իրողության, որ ազգայնականության և անջատվողականության սանձման և հանդարտեցման առավել գործուն միջոցներից մեկը կայսերական պետությունն է, որը ժողովուրդներին միավորում է միջոցների և միջոցառումների բարդ զուգակցությամբ, որոնց մեջ առաջնային տեղը պատկանում է բռնությանը: ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի օրինակները ցույց տվեցին, որ նման միջոցառումների հետևանքով ստեղծված համագոյակցությունը միշտ էլ ժամանակավոր բնույթ է կրում, և պետք է վերցնել Արևմտյան Եվրոպայի կողմից 20-րդ դարի երկրորդ կեսին ստեղծված այլընտրանքը՝ զարգացնել շուկայական հարաբերությունները և քաղաքական դեմոկրատիան, կյանքի և քաղաքական

հաստատությունների չափանիշների գործնական հավասարեցումը:

Ազգայնականությունը հետագա հզոր թափ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, սակայն ընդգծենք, որ գաղութատիրության դեմ պայքարում առաջացած անկախ պետությունների շարքում կային նաև այնպիսիները, որոնց առաջացումը կապված էր միայն իրադրությունների և հանգամանքների հետ ու ոչ մի կապ չունեին ազգային ինքնագիտակցության զարթոնքի և ազգային ինքնորոշման սկզբունքների հետ: Արդյունքում պետությունների մեծ մասը առաջանում էր գաղութային վարչակազմի առկա կացության պայմաններում և տարածքային սահմաններում:

Ազգայնականության երրորդ հզոր ալիքը կապված է ԽՍՀՄ-ի փլուզման հետ: Սկզբնական ժամանակաշրջանում՝ 1989-1990 թթ., «անօրինական» շարժումները և կազմակերպությունները Խորհրդային Միության տարածքում կրում էին ոչ այնքան ազգային, որքան համադեմոկրատական բնույթ: Օրինակ՝ Չեչենո-Ինգուշիայի ժողովրդական ճակատը և Կանաչ շարժումը, Կարաչայ-Չերքեզիայի ընտրողների ակումբը և այլն հանդես էին գալիս ժողովրդավարական գործընթացների, հրապարակայնության, տնտեսական և քաղաքական բարեփոխումների աջակցությամբ, իսկ ազգային բնույթի պահանջները հիմնականում վերաբերում էին ազգային մշակույթի, լեզվի, ավանդույթի և այլնի զարգացմանը: Սակայն աստիճանաբար ազգային շարժումները և կազմակերպությունները («Կովկաս», «Բարտ» («Միասնություն»), Չեչեն ժողովրդի համազգային կոնգրեսը Չեչենո-Ինգուշիայում, օսական «Ադաման Ցադիշ» («Ժողովրդական միություն») ազգային շարժումը, որը հանդես էր գալիս Հարավային և Հյուսիսային Օսիաների միավորման կոչով,

բալկարական «Թերե» («Բալկարական ֆորում») ազգային ընկերությունը, որը պահանջում էր Բալկարիային տալ հանրապետության կարգավիճակ Կաբարդինա-Բալկարիայի կազմում, ավարների, թաբասարանների, լեզգիների, կունիկների ազգային շարժումները և այլն)) հիմնական շեշտը սկսում են դնել ժողովրդի և էթնոազգային խմբերի ավելի մեծ ինքնուրույնության վրա, ընդհուպ մինչև անկախություն: Շուտով ամբողջ Հյուսիսային Կովկասում ազգայնական-ժայրահեղականների և չափավոր ազգայնական-ժողովրդավարների միջև սահմանազատման միտում է նկատվում: Ընդ որում հարկ է նշել, որ 1991թ. օգոստոսյան պուտչի ժամանակ ազգային շարժումների մեծ մասը համերաշխվում է դեմոկրատական ուժերի հետ՝ ի պաշտպանություն ժողովրդավարության:

Չեչնիայում ծավալվող իրադարձությունները և հատկապես 1992 թվականի վրաց-աբխազական հակամարտությունը էլ ավելի ակտիվացրեցին արմատականների գործողությունները: Չեչնիայի անկախության հայտարարությունից հետո կաբարդինական, բալկարական, ավարական, չերքեզական, կարաչայական և մյուս ազգային շարժումները սկսեցին ստեղծել կամավորական խմբեր Չեչնիայի նոր դեկավարությանը օգնելու համար: Չեչնիային աջակցելու կազմակերպչական կենտրոնը դարձավ Կովկասի լեռնական ժողովուրդների կոնֆեդերացիան (հետագայում Կովկասի ժողովուրդների կոնֆեդերացիա)՝ հիմնադրված 1991 թ. Կովկասի լեռնական ժողովուրդների ասամբլեայի հիմքի վրա (ստեղծված 1989 թ.): Կովկասի լեռնական ժողովուրդների կոնֆեդերացիայի հսկողության ներքո բազմաթիվ ազգային շարժումներ իրենց կամավորներին ուղարկեցին Աբխազիա՝ վրացական ագրեսիայից պաշտ-

պանելու համար, ընդ որում, այդ շարժումների ղեկավարների մի մասը սուր քննադատության ենթարկեց ռուսական ղեկավարությանը՝ արխագական ժողովրդի ազատագրության գործում անտարբերություն դրսևորելու համար: Միաժամանակ Ինգուշիայում շարժում սկսվեց Չեչնիայի հետ կոնֆեդերատիվ միություն ստեղծելու համար, սակայն 1993-1994 թթ. նախագահ Ռ. Աուշկին հաջողվեց ճնշել անջատվողական ձգտումները: Կաբարդինական ազգայնականներն էլ 1992-1993 թթ. շարժում ծավալեցին ադրդեական բոլոր ժողովուրդների համար մեկ պետություն ստեղծելու համար, սակայն Աբխազիայում պատերազմն ավարտվելուց հետո այդ կոչերն աստիճանաբար մարեցին:

1994 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ չեչենական պատերազմի սկսվելուն պես, ազգայնական շարժումները, որոնք կարծես թե թուլացել էին, նոր ուժով սկսեցին վերելք ապրել: Հակամարտող կողմերն իրենց հավակնությունները հիմնավորելու համար հաճախ դիմում են միջազգային իրավունքի նորմերին, հատկապես ժողովուրդների ինքնորոշման իրավունքին: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգամանքի վրա: Բազմաթիվ հանրապետություններում ոչ տիտղոսակիր ժողովուրդների ազգային շարժումները ունեին ոչ թե հակառուսական ուղղվածություն, այլ սկսվեցին որպես ազգային փոքրամասնությունների բախում՝ ընդդեմ տիտղոսակիր ազգերի, օրինակ՝ ղարաբաղյան, հարավօսական, արխագական ազգային-ազատագրական շարժումները: Արդյունքում տիտղոսավոր ազգերի ազգայնականությունն ու անջատվողականությունն անխուսափելիորեն ծնուն են փոքր ժողովուրդների կամ նորանկախ պետությունների ազգային փոքրամասնությունների ազգայնականությունն ու անջատվողականու-

թյունը: Այլ կերպ ասած, ազգայնականությունը, եթե չի կանգնեցվում, մշտապես վերարտադրվում է՝ քայքայելով և կոտրելով հասարակության նյութական և հոգևոր ինֆրաստրուկտուրան: Այդ իսկ պատճառով ռուսաստանյան կամ համանման այլ իրականության պայմաններում, երբ տվյալ էթնոսը կարող է բնակություն հաստատել իր հայրենիքից հեռու, բազմազգ պետության մեկ այլ հատվածում, բացառվում է միաէթնիկ հիմքի վրա պետականության կառուցումը: Ազգի սահմանումը՝ հիմնված էթնիկական ծագման ընդունման վրա՝ որպես առանցքային բաղադրատարր օրինաչափ չէ ժամանակակից ազգերի երևան գալու ժամանակաշրջանի նկատմամբ: Առավել ևս օրինաչափ չեն մեր օրերում, երբ տեղի են ունենում մարդկանց զանգվածային տեղաշարժեր և ժողովուրդների խաչասերում: Այս առումով խիստ բնութագրական է Պ. Սորոկինը, երբ գրում է, որ ներկա ժամանակներում արյան մաքրությունը պահպանվում է միայն ձիաբուծարաններում, իսկ մարդկանց աշխարհում արյան և ռասսայի միասնությունը՝ որպես ազգային չափանիշ, պիտանի չեն: Այս բառերը ուսուցողական են հատկապես Ադրբեջանի և Վրաստանի դեկավարությունների համար, որոնք ձգտում են ստեղծել միաէթնոս վարչակարգեր: Օրինակ՝ Ադրբեջանի նախկին նախագահ Ա. Էլչիբեյը իշխանության եկավ «Իսլամ, թյուրքիզմ, դեմոկրատիա», իսկ նրա մրցակից Է. Մահմեդովը էլ ավելի որոշակի՝ «Թյուրքիզմ, ադրբեջանիզմ, ազգային ինքնություն» նշանաբանով: Սակայն իրերի իրական դրության վերլուծությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանը և Վրաստանը՝ որպես պետություններ, կարող են գոյություն ունենալ միայն միջէթնիկական համաձայնության հիմքի վրա: Նույնը վերաբերում է նաև Հյուսիսկովկասյան հանրապետություններին: Անշուշտ, կարելի է հասկանալ Չչենիայի՝ անկախություն ձեռք բերելու հուսահատ ճիգերը, քանի

որ չէջնները և ինգուշները ամբողջատիրության պայմաններում մեծ զրկանքներ կրեցին: Առավել ևս Չեչնիայի բնիկ բնակչությունը մեծամասնություն է կազմում: Սակայն ամեն դեպքում իրացնել այդ ձգտումները հնարավոր է միայն ինչպես Չեչնիայի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ բոլոր կողմերի շահերը հաշվի առնելով, հակառակ դեպքում չնտածված փորձերի իրագործումը, ինչպես ցույց տվեցին երկու պատերազմները և Դաղստան ներխուժելը, իրենց հետևից կբերեն նոր աղետներ ինչպես սեփական ժողովրդի, այնպես էլ մյուս ժողովուրդների և պետությունների համար:

Կա նաև հետևյալ հարցը: Օրինակ, ինչպիսի անկախ և ինքնիշխան պետություն կառաջանա Դաղստանում՝ լեզգիների^օ, ավարների^օ, կունիկների^օ, դարգինների^օ: Ակներև է, որ այս ազգություններից յուրաքանչյուրը անխուսափելիորեն կխթանի մյուս ժողովուրդների ազգայնականությունը և այդպես անվերջ: Ընդ որում, այս ամենը կարող է հանգեցնել ռուսական ազգայնականության ինտենսիվացմանը: Բավական է միայն նայել Յյուսիսային Կովկասի քարտեզը, որպեսզի համոզվես, որ պետական սահմանների հաստատման ցանկացած փորձ՝ ըստ ազգային սկզբունքի, կբերի անկանխատեսելի արյունոտ հետևանքներ: Պետք է հաշվի առնել նաև, որ հյուսիսկովկասյան իրականության պայմաններում ոչ թե ազգերն են ստեղծում պետություն և ազգայնականություն, այլ ազգերն են ստեղծվում պետության կողմից: Անշուշտ, ազգայնականությունն ունի իր դրական կողմը՝ որպես ժողովրդի ուժերը իր ազատագրության համար մոբիլիզացնող գործոն, ստեղծագործական պոռթկման աղբյուր: Մինևույն ժամանակ ազգային գաղափարը և ազգայնականությունը կարող են պատճառ հանդիսանալ զանազան տեսակների բախումների, սառը և տաք պատերազմների

առաջացման համար: Ազգայնականությունը՝ որպես սոցիոնշակութային երևույթ, շատ նմանություններ ունի կրոնի և գաղափարախոսության հետ և որոշակիորեն ձևավորում է աշխարհընկալման ուրվագծերը, բայց, ինչպես ցույց տվեց 20-րդ դարի վերջին տասնամյակում Յուլիսիային Կովկասում ստեղծված իրադրությունը, ազգայնականության կեղևի տակ հանդես էին գալիս տարբեր շահեր և շարժառիթներ. օրինակ, մասնակցել նյութական ռեսուրսների բաժանման, իշխանության և հեղինակության նվաճման գործին, հաղթահարել հոգեբանական և գաղափարախոսական բարդությունները և այլն: Այն ամբողջացնում է ավանդական առասպելները և սիմվոլները, բայց դրանք օգտագործում է ազգային պետության հիմնավորման և պաշտպանության համար:

Այսպիսով, սույն դասախոսությունը ցույց տվեց, որ թեև ազգայնական շարժումներն առաջանում են պատմականորեն հիմնավորված գաղափարախոսական հողի վրա, սակայն իրականանում են՝ իշխանական և բիզնես շահերից ելնելով: Միաժամանակ Յուլիսիային Կովկասում ազգային պետությունների ձևավորումը գոնե մոտ ապագայում իրատեսական է, քանի որ տարածաշրջանի ժողովուրդներն ունեն պատմականորեն չլուծված բազմաթիվ խնդիրներ: Նույնիսկ ինքնիշխան պետություններ հանդիսացող Վրաստանի և Ադրբեջանի համար ազգային հարցը մնում է խիստ օրակարգային, և այս առումով միայն Հայաստանն է, որ չունի նման խնդիրներ:

**Դասախոսություն 10՝ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՎԿԱՍՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ**

Հանգուցային բառեր. Արևմուտք, տնտեսություն, Ադրբեջան, ռազմական հենակետ, թյուրքալեզու երկրներ, ռազմական համագործակցություն

Սույն դասախոսությունում ներկայացվում են Թուրքիայի աշխարհաքաղաքական շահերը Հյուսիսային Կովկասում և Այսրկովկասում, ինչպես նաև Թուրքիայի հարաբերությունները Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հետ: Դասախոսությունում ներկայացված հարցերը խիստ արդիական են և կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացների տեսանկյունից:

«Սառը պատերազմի» ավարտից հետո Թուրքիան՝ որպես Արևմուտքի համար կարևորագույն ռազմական հենակետ, շատ հարցերում կորցնում է իր աշխարհաքաղաքական նշանակությունը: Խորհրդային վտանգի վերացումից հետո Արևմտյան Եվրոպան և ԱՄՆ-ն ավելի ու ավելի են համոզվում, որ Թուրքիայի նախկին դերը և նշանակությունը արդի իրողությունների պայմաններում զգալիորեն նվազում են: Անվտանգության ոլորտում Թուրքիայի ռազմավարական երկընտրանքն այժմ արդեն չի եզրափակվում Խորհրդային Միության կողմից սպառնալիքին դիմագրավելով, քանի որ արդեն կան այլ վտանգներ, որոնց աղբյուրը դժվար է հստակ սահմանել: Այդ վտանգը հատկապես ուժեղ է Սիրիայի և Իրանի կողմից, քանի որ առաջինը կուտակել է նշանակալի ռազմական պաշարներ, իսկ երկրորդը հակազդում է Թուրքիայի պանթյուրքական ծրագրերին և Այսրկովկասում գերիշխող դիրք գրավելու միտումներին ու փորձերին: Թուրքիային մեծ անհանգստություններ են պատճառում Բալկաններում և Այսրկովկասում աճող ազգայնականությունը և սեպարատիզմը, որոնք կարող

են վերածվել սեփական երկրում էթնոագգային հականարտություններ առաջացնելու գործոնի:

Այդուհանդերձ, Թուրքիան Կովկասում և Կենտրոնական Ասիայում իր քաղաքականության մեջ ձեռք է բերել Արևմուտքի՝ հատկապես ԱՄՆ-ի աջակցությունը: Թուրքիան Արևմուտքի կողմից դիտվում է որպես Արևմուտքի, Բալկանների և Մերձավոր Արևելքի միջև կամուրջ, ընդ որում, ինչն առավել հետաքրքիր է, Թուրքիան նոր կազմավորված մուսուլմանական երկրներին կօգնի աշխարհիկ ժողովրդավարություններ դառնալու ճանապարհին: Չնայած Թուրքիան հույս ուներ Խորհրդային Միության անկումից հետո ստանալ կարևոր տնտեսական առավելություն, այդուհանդերձ, տարածաշրջանում նրա գլխավոր մրցակիցը Ռուսաստանն է:

Միջազգային ասպարեզում նոր թյուրքալեզու պետությունների (Ղազախստան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Ղրղզստան, Ադրբեջան) հանդես գալը Թուրքիային դրդեց առաջ քաշել իր աշխարհաքաղաքական շահերը: 1990-ականների հենց սկզբից Այսրկովկասն ու Միջին Ասիայի տարածաշրջանը Թուրքիայի համար դարձան նոր «այլընտրանքային» ուղղություն: Թուրքիայում կրկին ուժեղացավ Մեծ Թուրանի ստեղծման գաղափարը, որը միավորելու էր 120 մլն. թյուրքալեզու ժողովուրդների մեկ պետության մեջ՝ ձգվելով արևմտյան Չինաստանից մինչև Միջերկրական ծովի արևելյան ափերը: Միավորելով նոր թյուրքալեզու երկրներին իր շուրջը՝ Թուրքիան հույս ունի իրականացնել պանթյուրքիզմի ծրագրերը և ստեղծել ռուսական ազդեցությանը հակակշիռ Կովկասյան-Կասպիական տարածաշրջանում և Կենտրոնական Ասիայում: Դրա համար էլ զարմանալի չէ, որ Թուրքիան հենց սկզբից ամեն կերպ ի ցույց էր դնում իր հովանավորությունը հետխորհրդային նորանկախ

պետությունների նկատմամբ՝ հուսալով, որ Անկարայի գերակայության տակ կհամախմբի բոլոր թյուրքերին և դրանով իսկ իր հսկողության տակ կվերցնի նրանց հարուստ բնական պաշարները: Եվ պատահական չէ, որ արդեն նախորդ դարի 80-ական թվականների վերջերին Թուրքիան գործուն քայլեր է ձեռնարկում՝ մշակութային, քաղաքական և տնտեսական սերտ կապեր հաստատելով անկախություն ձեռք բերած նախկին խորհրդային թյուրքալեզու հանրապետությունների քաղաքական ուժերի հետ: Ընդ որում, Թուրքիան հայտարարում էր, որ ձգտում է վերականգնել խորհրդային ժամանակաշրջանում քայքայված կապերը Կովկասի թյուրքալեզու ժողովուրդների հետ: Օրինակ, հենց նույն Ադրբեջանը հույս ուներ Թուրքիայի օգնությամբ հասնել տնտեսական հրաշքի, իսկ Թուրքիան էլ, բնականաբար, անընդհատ գովում էր իր մոդելը և ներշնչում, որ կարող է դառնալ նույնիսկ միակ և հիմնական օտարերկրյա ներդրումների աղբյուրը նորանկախ երկրներում: Մյուս կողմից էլ պետք է նշել, որ Կովկասում Թուրքիայի համար քաղաքական գործոնի նշանակություն ունի այդ երկրի բազմաքանակ կովկասյան համայնքը, որը կազմում է շուրջ 7 մլն. մարդ: Աբխազների թիվը Թուրքիայում հաշվվում է շուրջ կես միլիոն:

Չգտելով պահպանել լարվածությունը Հյուսիսային Կովկասում՝ հատկապես Չեչենիայում, որը լրացուցիչ փաստարկներ կտար Բաքու–Ջեյհան նավթանուղի շինարարության համար՝ շրջանցելով Ռուսաստանը, միաժամանակ Այսրկովկասում Թուրքիան հանդես է գալիս պետական սահմանները անխաթար պահելու հայտարարություններով և գործնական քայլերով: Օրինակ, վրաց-աբխազական պատերազմի ժամանակ Թուրքիան դատապարտեց Վրաստանի կառավարության հանցավոր գործողությունները: Իսկ չեչենական հարցում Թուրքիան մի կողմից առաջարկում էր դուրս բերել

ռուսական զորքերը Չեչնիայից, մյուս կողմից հանդես էր գալիս Ռուսաստանի տարածքային ամբողջականության պաշտպանությամբ՝ թույլ չտալով կովկասյան սփյուռքի կողմից կամավորների ուղարկումը Չեչնիա, ինչպես նաև Թուրքիայի տարածքում չեչեն գրոհայինների ռազմական ճամբարներ կազմակերպելը և այլն: Այս ամենը բացատրվում է նրանով, որ Թուրքիան ի դեմս քրդերի ունի իր սեփական «Չեչնիան», և անհրաժեշտության դեպքում Ռուսաստանը ոչ առանց հաջողության կարող է օգտագործել քրդական խաղաքարտը: Անշուշտ, Ռուսաստանն էլ քրդական հարցում իրեն զգույշ է պահում, քանի որ քրդական կոնֆլիկտի սրումը ամբողջ կովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանի համար հղի է բացասական հետևանքներով:

Այս առումով հետաքրքիր է հիշել հատկապես 19-րդ դարի 30-ական թվականների պատմությունը, երբ Ռուսաստանը բացահայտ գործողություններով պաշտպանեց Բարձր Դռանը Եգիպտոսի կառավարիչ Մուհամեդ Ալիից, որը, ջախջախելով սուլթանական բանակները, շարժվում էր դեպի Կ.Պոլիս, և միայն ռուսական սպառնալիքը ստիպեց վերջինիս դադարեցնել իր հաղթարշավը: Այս բոլորը ցույց է տալիս, որ Ռուսաստանի համար ավելի գերադասելի էր Օսմանյան կայսրության թեկուզև թույլ գոյությունը, քան թե թուլացումը և քայքայումը, որից կօգտվեին Արևմտյան Եվրոպայի պետությունները:

Ինչ վերաբերում է Կովկասում և նորանկախ թյուրքալեզու հանրապետություններում Թուրքիայի արտաքին քաղաքական գծի սահմաններին և հնարավորություններին, ապա պետք է հաշվի առնել, որ թուրքական տնտեսությունը, որը դեռևս լիովին շուկայական չի դարձել, բախվում է բազում խնդիրների, որոնք առանց Արևմուտքի օգնության միանշանակ չի կարող հաղթահարել: Խոսքն հատկապես վերաբերում է

շարունակական բարձր արժեզրկմանը, 70 մլրդ դոլլարն անցնող արտաքին պարտքին, անընդունակությանը հավասարապես մրցակցել համաշխարհային շուկայում զարգացած երկրների հետ: Այդուհանդերձ, Թուրքիան Վրաստանին, Ադրբեջանին և Կենտրոնական Ասիայի երկրներին տրամադրեց ավելի քան 1 մլրդ դոլլարի վարկեր և փոխառություններ: Ղազախստանում թուրքական ընկերությունների կողմից իրականացվող նախագծերի ընդհանուր արժեքը կազմում էր 1 մլրդ դոլլար: Այնուամենայնիվ, այն հույսերը, որ Թուրքիան կդառնա այն խոշորագույն հովանավորը և ներդրողը, որը նորանկախ հանրապետություններին դուրս կբերի տնտեսական ճգնաժամից, աստիճանաբար մարում են:

Միաժամանակ ակնհայտ է դառնում, որ ժամանակակից աշխարհում միայն էթնիկական և լեզվական ազգակցությունը բավարար չէ թյուրքալեզու ժողովուրդներին մեկ օրգանիզմում միավորելու համար, առավել ևս խոսք չի կարող լինել ինչ-որ պանթյուրքական կամ այլ սկզբունքների հիման վրա պետական կազմավորման ստեղծման մասին: Իր ազդեցությունը տարածելու համար Թուրքիան ունի սահմանափակ քաղաքական և տնտեսական հնարավորություններ:

Հետխորհրդային հանրապետությունների, այդ թվում և Ադրբեջանի ղեկավարները, հանոզվում են, որ Թուրքիայի տնտեսական հնարավորությունները շատ ավելի համեստ են նրա քաղաքական ամբիցիաներից:

Թուրքիայի գլխավոր դաշնակիցը կամ կարելի է ասել կրտսեր եղբայրը Այսրկովկասում Ադրբեջանն է, որի հարաբերությունները Թուրքիայի հետ բազմակողմ են և ընդգրկուն: Չի կարելի բացառել, որ թուրքական զենքը կարող է դառնալ ադրբեջանական ներմուծման կարևոր ոլորտներից մեկը, և այդ զենքը այս կամ այն կերպ կարող է հայտնվել Հյուսիսային Կովկասում: Հ. Ալիևի

իշխանության գալուց հետո Թուրքիայի հետ Ադրբեջանի հարաբերություններն ավելի հստակեցվեցին, ճշգրտվեցին. նույնիսկ թուրքական նավթային որոշ ընկերությունների գործունեությունը Ադրբեջանում կասեցվեց և նախապատվությունը տրվեց արևմտյան նավթային ընկերություններին: Ավելին, Ադրբեջանը մտավ ԱՊՀ: Այդուհանդերձ, թուրք-ադրբեջանական հարաբերությունները մնում են շատ ջերմ, և այդ վիճակը կարելի է արտահայտել 1994 թ. Հ. Ալիևի՝ Թուրքիա կատարած այցի ժամանակ արված հայտարարությամբ. «Մեկ ազգ, երկու պետություն»: Իրանից հետո Թուրքիան Ադրբեջանի արտաքին առևտրում երկրորդ տեղն է գրավում:

Թուրքիայի համար հիմնական խոչընդոտը թուրքալեզու նոր պետությունների հետ ընդհանուր սահմաններ չունենալն է (եթե չհաշվենք Նախիջևանի հետ սահմանը): Թուրքիան Արցախյան ազատագրական պատերազմի ժամանակ չկարողացավ լուրջ դերակատարություն ունենալ, իսկ Թուրքիայի ռազմակոչ հայտարարությունները պատերազմին միջամտելու համար զսպվեցին Ռուսաստանի կողմից, որը հայտարարեց, թե թույլ չի տա Թուրքիայի գինված միջամտությունը տարածաշրջանում: Միաժամանակ Թուրքիան Ադրբեջանին հասկացրեց, որ կգործի սառը գլխով և խնդիրը կտեղափոխի դիվանագիտական հարթություն: Եվ իրոք, Թուրքիայի ակտիվ մասնակցությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1993 թ. պահանջում է դուրս բերել հայկական զորքերը Ֆիզուլիից, Ջեբրայիլից և Աղդամի շրջաններից՝ հաստատելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Թուրքիայի՝ այդ ուղությամբ ավելի գործուն քայլերը կասեցվեցին Ռուսաստանի կողմից, որն Անվտանգության խորհրդում օգտվեց վետոյի իր իրավունքից և թույլ չտվեց Հայաստանի նկատմամբ

կիրառել Թուրքիայի կողմից առաջարկված պատժամիջոցները: Նույնիսկ միջազգային ճնշման տակ Թուրքիան 1993 թ. ամռանը բացեց Հայաստանի հետ իր սահմանը: Վերջին տարիներին Բաքվի և Անկարայի միջև ռազմական համագործակցությունը ավելի է ընդլայնվում, որը միտում ունի վերածվելու աշխարհաքաղաքական ռազմական դաշինքի, ինչն ուղղված կլինի Հայաստանի և Ռուսաստանի դեմ:

Բացի Ադրբեջանից, Թուրքիան տնտեսական և քաղաքական սերտ հարաբերություններ ունի Վրաստանի հետ, որն Ադրբեջանի հետ միասին կարևոր նշանակություն ունի Թուրքիայի համար հարմար աշխարհագրական դիրքով, ինչը կարևոր է տրանսպորտային հաղորդակցությունների ծրագրերը իրագործելու համար: Այս երեք պետությունները նմանատիպ հարցերում միշտ հանդես են գալիս համատեղ դիրքորոշմամբ: Թուրքիան և Վրաստանը փոխադարձաբար դիտվում և հանդիսանում են ռազմավարական գործընկերներ: Վրաստանը Ադրբեջանի հետ ՎՈՒԱՄ կազմակերպության անդամ երկրներից է:

Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունները պայմանավորված են ինչպես պատմական, այնպես էլ ժամանակակից իրողությունների (Ղարաբաղյան հիմնախնդիր) չլուծված խնդիրներով, որոնք լարված են պահում երկու երկրների հարաբերությունները և անվստահություն սերմանում մեկմեկու հանդեպ:

Այսպիսով, սույն դասախոսությունը ցույց տվեց, որ անկախ միջազգային հարաբերություններում տեղի ունեցող փոփոխություններից՝ Թուրքիան տարածաշրջանում պահպանում է իր կարևորագույն նշանակությունը: Ադրբեջանի և Վրաստանի հետ ռազմավարական հարաբերությունների զարգացումը Թուրքիայի արտա-

*քին քաղաքական հայեցակարգի հիմնական ուղղու-
թյուններից է:*

**Ղասախոսություն 11՝ ԻՐԱՆ-ԱՂՐԲԵՋԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ՂԱՐԻ 90-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲԻՆ**

Հանգուցային բառեր. տարածաշրջան, Ատրպատական, ընդհանրություն, տարածքային ամբողջականություն, թյուրքալեզու բնակչություն, տնտեսական դժվարություններ

Սույն ղասախոսության մեջ ներկայացված հարցերի պարզաբանումը կարևոր է ոչ միայն Իրանի և Աղրբեջանի պատմության ու քաղաքական հարաբերությունների տեսանկյունից, այլև հրատապ է Հայաստանի պատմության ուսումնասիրության և քաղաքական կողմնորոշումների առումով, քանի որ ԻԻՀ Աղրբեջանի հետ ունի խորը քաղաքական հակասություններ, որոնք վերջին ժամանակներում էլ ավելի են խորանում:

Խորհրդային Միության փլուզումից հետո, ի թիվս նախկին խորհրդային հանրապետությունների, Աղրբեջանը ևս հայտարարեց իր անկախության մասին (1991թ. հոկտեմբերի 18-ին): Այդ ժամանակահատվածում, նկատի առնելով տարածաշրջանում առաջացած նոր իրավիճակը, Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ) առաջիններից մեկն էր, որը պաշտոնապես ճանաչեց իր նորանկախ հարևանին: Թեև ԻԻՀ ճանաչեց Աղրբեջանի Հանրապետությունը (ԱՀ), սակայն հասկանալի էր, որ Իրանի հարևանությամբ իր անկախությունը հռչակած այդ պետության «Աղրբեջան» անվանումն արդեն իսկ իր մեջ պարունակում էր քաղաքական սպառնալիք ԻԻՀ տարածքային ամբողջականությանը, քանի որ «Աղրբեջան» է կոչվում նաև Իրանի հյուսիսում թյուրքալեզու բնակչություն ունեցող Ատրպատականի երկրամասը:

Հայտնի է, որ դեռևս 1918թ., երբ երիտթուրքական կառավարության գործերը ռազմակալված ենթարկեցին

Այսրկովկասի մահմեդաբնակ շրջանները, նրանք այդ երկրամասը հեռահար նպատակով, առաջնորդվելով պանթուրքական երազանքներով անվանեցին «Ադրբեջան»: Իթքիհադի ծրագրերի համաձայն՝ թյուրքալեզու բնակչություն ունեցող Ատրպատականի հսկայական երկրամասը «Ադրբեջանի Հանրապետության» հետ միասին հետագայում պետք է միացվեր Օսմանյան կայսրությանը՝ դրանով իսկ իրականացնելով համաթուրքականների «Մեծ Թուրքիա» ստեղծելու երազանքը:

Նկատի ունենալով Իրանի և Ադրբեջանի միջև մի շարք ընդհանրությունները (պատմամշակութային, կրոնական, քաղաքական և այլն)՝ թվում էր, թե այդ երկու հարևան և սահմանակից երկրների միջև հարաբերությունները կզարգանան բազմաբնույթ և վերընթաց գծով: Իսկապես, ԱՀ գոյացման սկզբնական շրջանում երկու երկրների միջև ստորագրվեցին մի շարք միջպետական պայմանագրեր և համաձայնագրեր, մշակվեցին համատեղ տնտեսական ծրագրեր, սկիզբ առավ մշակութային համագործակցություն և այլն: ԻԻՀ քաղաքական դեկավարությունը մեծ աջակցություն ցուցաբերեց ԱՀ նրա տնտեսական դժվարությունները գեթ ինչ-որ չափով հաղթահարելու և ամենակարևորը՝ նորանկախ պետությանը միջազգային կազմակերպությունների մեջ ներգրավելու համար: Այսպես, օրինակ՝ շնորհիվ Իրանի ջանքերի՝ Ադրբեջանը կարճ ժամանակամիջոցում դարձավ Իսլամական Կոնֆերանս Կազմակերպության (ԻԿԿ), Կասպից ծովի ավազանի Տնտեսական համագործակցություն կազմակերպության (ԷԿՕ) և մի շարք այլ միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների անդամ:

Իրանա-ադրբեջանական հարաբերություններն Այազ Մութալիբովի նախագահության շրջանում արձանագրեցին մի շարք կարևոր ձեռքբերումներ: Երկու երկրներում բացվեցին դեսպանատներ, տեղի ունեցան պետական

գործիչների փոխայցելություններ, հիմք դրվեց իրավապայմանագրային հարաբերություններին և այլն:

Սակայն պետք է նշել, որ ԱՀ անկախության ձեռքբերումից հետո նորանկախ այդ երկրում ուժգին թափով սկսեց գլուխ բարձրացնել ազգայնականությունը, որի պարագլուխներից մեկն էր Աբուլֆազ Էլչիբեյը: Վերջինս դեռևս 1988թ., այսինքն՝ ԽՍՀՄ գոյության տարիներին, հանդես էր գալիս որպես այլախոհ և ստեղծել էր ազգայնական մի կազմակերպություն, որն ուներ «Միավորված Ադրբեջանի Միություն» անվանումը: Ծայրահեղական սկզբունքներով առաջնորդվող այս կազմակերպությունն իր առջև խնդիր էր դրել «երկու Ադրբեջանների», այսինքն՝ ԱՀ և Իրանական Ադրբեջանի (Ատրպատական) միավորումը մեկ պետության մեջ: Ընդ որում՝ հստակ պահանջ էր դրվում թյուրքալեզու գերակշիռ բնակչություն ունեցող Իրանական Ադրբեջանը միացնել «Մայր հայրենիք» («Անա Վաթան») Ադրբեջանի Հանրապետությանը: Դժվար չէ նկատել, որ այդ ծրագրի հիմքում ընկած էր պանթյուրքիզմի (համաթյուրքականության) գաղափարը: «Միավորված Ադրբեջանի Միություն»-ն իր առջև խնդիր էր դրել համայն աշխարհին բացատրել, որ ադրբեջանցիները մինչև ռուս-պարսկական պատերազմները եղել են մեկ միասնական ազգ և երկիր:

1992թ. մարտի 3-ին Էլչիբեյի ժայռահեղ ազգայնական «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» (Աժճ) կուսակցությունը կարողացավ Այազ Մութալիբովին հեռացնել իշխանությունից: Նախագահ հռչակվելուց հետո Էլչիբեյի առաջին հայտարարություններից մեկն այն էր, որ Իրանը սպառնալիք է Ադրբեջանի անվտանգության համար, ուստի Բաքուն պետք է դաշինքի մեջ մտնի Անկարայի հետ: Նրա օրոք Ադրբեջանի կառավարությունը հանդես եկավ ռազմաշունչ ծավալապաշտական հայտարարություն-

ներով ազերիների հայրենիքի «զերության մեջ գտնվող» մասը՝ Իրանական Ադրբեջանը, «ազատագրելու» և «երկու Ադրբեջանները միավորելու» վերաբերյալ: Ըստ այդմ, ԱԺԾ-ի ծրագրի մեջ մտցվեց հատուկ կետ այսպես կոչված «Հարավային Ադրբեջանը» նորանկախ ԱՀ միացնելու անհրաժեշտության մասին: Նախագահ Ա. Էլչիբեյի ստեղծած միությունը լցվել էր եռանդուն գործունեությամբ և ձգտում էր ազերիների «ազատության պահանջի» ձայնը հասցնել միջազգային հանրությանը: ԱԺԾ-ն բուռն քարոզչություն էր վարում նաև այն մասին, որ ապագայում Իրանն անխուսափելիորեն կմասնատվի, որի հետևանքով կստեղծվի մեկ միասնական 40 միլիոն ազերի բնակչություն ունեցող երկիր:

Ա. Էլչիբեյի շեշտված հակաիրանական դիրքորոշումը, սակայն, չէր սահմանափակվում լոկ «երկու Ադրբեջանների միավորման» պանթյուրքիստական երազանքներով: Նրա քաղաքական առճակատումը ԻԻՀ նկատմամբ դրսևորվում էր նաև այլ հարցերում: Օրինակ՝ Ղարաբաղի, հայ-իրանական հարաբերությունների, «իսլամական հեղափոխությունը դեպի Ադրբեջան արտահանելու» և բազմաթիվ այլ հարցերում: Նա կտրականապես մերժում էր Ղարաբաղյան խնդրի խաղաղ կարգավորման հարցում իրանական կողմի ցանկացած միջնորդություն կամ քաղաքական նախաձեռնություն:

Ա. Էլչիբեյի սադրիչ քայլերի արդյունքում ազերիները, խախտելով միջազգային և միջպետական բոլոր համաձայնագրերն ու ընդունված կարգերը, ինչպես նաև ԻԻՀ տարածքային ամբողջականության սկզբունքը, սկսեցին ապօրինի կերպով զանգվածորեն ներթափանցել Իրանի տարածք՝ երկու պետությունների միջև առաջ բերելով մեծ լարվածություն:

Ա. Էլչիբեյի որդեգրած այսպիսի քաղաքական ուղեգիծը, բնականաբար, չէր կարող ծայրահեղ լարվածություն չստեղծել Իրան-Ադրբեջան հարաբերություններում, մանավանդ, որ Բաքուն սկսել էր մեղադրել Թեհրանին իր ներքին գործերին միջամտելու և Ադրբեջանի տարածքում կրոնական քարոզչություն ծավալելու հարցերում: Բացի այդ, Էլչիբեյի խիստ թուրքամետ կողմնորոշումը և նրա բազմիցս արած հայտարարություններն այն մասին, որ ԱՅ իր զարգացման հիմքում դնելու է «թուրքական նշանաձևը», բայց ոչ երբեք իրանական իսլամական կրոնական մոդելը, Թեհրանում առաջ բերեցին դժգոհություններ:

ԻԻՅ լուրջ մտահոգություն էր պատճառում նաև Էլչիբեյի կառավարության մերձեցման քայլերն ԱՄՆ-ի և Իսրայելի հետ: Իրանի իշխանությունները գտնում էին, որ Ադրբեջանի միջոցով այդ երկրների մուտքը տարածաշրջան ուղղակի հակասում է Իրանի շահերին: Այդ առթիվ իրանական պաշտոնական և ոչ պաշտոնական մամուլում հայտնվեցին հողվածներ և քաղաքական վերլուծություններ, որոնցում խիստ քննադատության էր ենթարկվում Էլչիբեյի որդեգրած հակաիրանական քաղաքականության ընթացքը: Նույնիսկ տեղ գտան արտահայտություններ, որ անհրաժեշտ է Ադրբեջանի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ, սառեցնել նրա հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունները և այլն: Իրան-Ադրբեջան հարաբերությունների հարցը նույնիսկ դարձավ իրանական խորհրդարանի՝ մեջլիսի հատուկ քննարկման առարկա: Նրա ամբիոնից հնչեցին սուր քննադատական խոսքեր Էլչիբեյի դրսևորած հակաիրանական տրամադրությունների վերաբերյալ: Այս առթիվ հատկապես սուր քննադատությամբ հանդես եկավ մեջլիսում Թավրիզի պատգամավորը, որը կտրուկ արտահայտություններով դատապարտեց ազերի

ազգայնականների և նրանց պարագլուխ Էլչիբեյի՝ պանթյուրքիստական նկրտումներով տոգորված քաղաքականությունը:

Իրանի կառավարությունը թեև որոշակիորեն անհանգստացած էր «երկու Ադրբեջանների միավորման» ԱՀ սադրիչ քաղաքականությամբ, մանավանդ որ ազերի ազգայնականների ծավալապաշտական կարգախոսները որոշ աջակցություն էին գտնում արևմտյան ուժերի կողմից, բայց դրանով հանդերձ, Թեհրանում հիանալի գիտակցում էին, որ հիշյալ ծրագրերը արկածախնդրական են և չունեն կյանքում կենսագործվելու իրական հնարավորություններ: ԻԻՀ ղեկավարների կարծիքով՝ վերոհիշյալ ծրագրերը միտված են ապակայունացնելու ոչ միայն Իրանի ներքին վիճակը, այլ նաև տարածաշրջանային կայունությունն ու խաղաղությունը:

Ադրբեջանում կան նաև այնպիսի պետական գործիչներ, որոնք համոզված են, որ «Հարավային Ադրբեջանը» «Հյուսիսային Ադրբեջանի» հետ միավորելու երազանքներն անիրականանալի ու սին են: Այսպես, օրինակ՝ Իրանում ԱՀ նախկին դեսպան Նասիբ Ջադեն «Մուսավաթ» թերթին 1997թ. սեպտեմբերին տված հարցազրույցում նշել է. «Գերնպատակին հասնելու համար (երկու Ադրբեջանների միավորումը) առկա է երկու խոչընդոտ. առաջինը՝ Իրանում ապրող բոլոր ազգերի միջև կա կրոնական, պատմական և մշակութային մեծ ընդհանրություն, որը մեծ արգելք է Իրանի ներքին պառակտման համար, և երկրորդ խոչընդոտն այն է, որ Իրանում ապրող ազերիներն ավելի շատ հակված են ԱՀ միացմանը ԻԻՀ»:

Իրանական ժողովուրդը և պետությունը լի են վճռականությամբ՝ պաշտպանելու սեփական երկրի տարածքային ամբողջականությունը և դիմագրավելու

ազերի ազգայնականների՝ Իրանին ներկայացվող բոլոր նարտահրավերներին:

Այսպիսով, սույն դասախոսությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետության համար իր երկու հարևան երկրների՝ Ադրբեջանի և Իրանի միջև հարաբերություններն ունեն կարևոր նշանակություն, քանի որ Իրանը տարածաշրջանի կարևորագույն դերակատարներից է և Հայաստանի հետ ունի բարիդրացիական հարաբերություններ:

**Դասախոսություն 12՝ ԻԻՀ-ԱԴՐԲԵՋԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ-21-ՐԴ
ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ**

Հանգուցային բառեր. Արևմուտք, ՆԱՏՕ, հակաիրանական, ռազմավարական շահ, աշխարհաքաղաքական հնարավորություններ, արևմտամետ կողմնորոշում

Սույն դասախոսությունը նախորդի տրամաբանական շարունակությունն է և այստեղ հիմնականում ներկայացվում են Իրանի և Ադրբեջանի հարաբերությունները տարածաշրջանում Արևմուտքի քաղաքական առաջնահերթությունների և շահագրգռությունների համատեքստում: Այս համատեքստում կարևոր են նաև ՀՀ մոտեցումները տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների նկատմամբ:

Իրան-Ադրբեջան փոխհարաբերությունների զարգացման տարբեր փուլերում ակնհայտ էր դարձել, որ վաղ թե ուշ Ադրբեջանի Հանրապետությունը դառնալու է արևմտյան կառույցների ռազմավարական կողմնակիցը՝ դրանով իսկ ինչ-ինչ խնդիրներ ստեղծելով Իրանի Իսլամական Հանրապետության համար: Գաղտնիք չէ, որ արևմտյան պետությունների, մասնավորապես ԱՄՆ-ի և տարածաշրջանում նրա դաշնակիցների խնդիրն է սահմանափակել իրանական ռազմական և տեխնոլոգիական առաջընթացը, որը դիտվում է որպես Արևմուտքի ռազմավարական շահերին սպառնացող մեծագույն վտանգ: Ի դեմս արևմտյան մի շարք կառույցների, մասնավորապես ՆԱՏՕ-ի, ինչպես նաև Իսրայելի, Իրանը տեսնում է իր ռազմավարական շահերը տարածաշրջանում սահմանափակող, ավելին՝ կասեցնող կարևոր գործոն: Ընդ որում, Թեհրանը մտավախություն ունի, որ Թել-Ավիվին կհաջողվի հակաիրանական ճակատի մեջ ընդգրկել տարածաշրջանային այնպիսի երկրների, ինչպիսիք են Թուրքիան, Ադրբեջանը, Վրաստանը:

Իրան-Իսրայել առճակատումը, դուրս գալով զուտ իսլամական խնդիրների շրջանակներից (Ղոդսի՝ մուսուլմանական սրբավայրերի ազատագրումը սիոնիստական բռնազավթումից, ինչպես նաև Իսրայելի կողմից գրավյալ արաբական տարածքների վերադարձի հարցը), ձեռք է բերում աշխարհաքաղաքական սուր առճակատման բնույթ, որը լուրջ սպառնալիք է մերձավորարևելյան խաղաղության ու կայունության համար: Ներկա փուլում կողմերի միջև այդ դիմակայությանն ընդունել է այնպիսի սուր բնույթ, որ ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեժադը չխորշեց հայտարարել. «Իսրայելը պետք է վերանա աշխարհի քաղաքական քարտեզից»:

ՆԱՏՕ-ն և Արևմուտքի երկրները իրենց կովկասյան ռազմավարության մեջ կարևոր գնահատական են տալիս Ադրբեջանի աշխարհաքաղաքական հնարավորություններին՝ մատնանշելով նրա առանցքային դերը՝ որպես Արևմուտքի տարածաշրջանային քաղաքականության «նեցուկ» ոչ միայն Կովկասում, այլև Մերձավոր Արևելքում և Իրանում:

Նկատի ունենալով, որ նորանկախ շիական Ադրբեջանի Հանրապետությունը ԻԻՀ սահմանակից պետություն է՝ Թեհրանը մշտապես մեծ հետաքրքրություն է դրսևորում այդ պետության արտաքին քաղաքական կողմնորոշիչների նկատմամբ: Ընդ որում, իրանական քաղաքական շրջանակներում կայուն կերպով ձևավորվել է այն տեսակետը, որ ԱՀ արտաքին քաղաքականության արևմտամետ կողմնորոշումն այլևս անշրջելի է, մանավանդ որ այն սերտորեն կապված է տարածաշրջանում նավթային շահերի հետ, ինչպես նաև այն իրողության, որ Արևմուտքն առհասարակ դրսևորում է Կովկասում աշխարհաքաղաքական ներկայության բուռն և անկասելի ձգտումներ:

Ադրբեջանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու մտադրության մասին առաջին անգամ 1991 թ. դեկտեմբերի 4-ին խոսել է արտաքին գործերի նախարար Յուսեյն Սադիխովը: Իսկ 1992 թ. հունվարին նախագահ Այազ Մութալիբովը ռազմական համագործակցության պայմանագիր կնքեց ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի հետ: Նույն թվականի հունիսի 6-ին Աբուլֆազ Էլչիբեյը հայտարարեց, որ ԱՀ հիմնական գործընկերներն են ԱՄՆ-ը, Թուրքիան և ՆԱՏՕ-ն: Այս քայլերը չէին կարող չանհանգստացնել ԻԻՀ-ին, և Թեհրանում ի վերջո ձևավորվեց այն տեսակետը, որ Ադրբեջանն ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի, Իսրայելի և Թուրքիայի համար ճանապարհ է բացում դեպի Կովկաս և ընդհանրապես տարածաշրջան, որոնք հիմնավորվելով աշխատելու են թուլացնել Իրանի ազդեցությունը:

Ադրբեջանի նկատմամբ Արևմուտքի հետաքրքրությունն էլ ավելի մեծացավ 1994 թ. նավթային պայմանագրեր կնքելուց հետո: ԱՀ-ն մինչև 2000 թ. խոշորագույն նավթային ընկերությունների հետ կնքել է 45 մլրդ դոլլար արժողությամբ մեկուկես տասնյակ միջազգային պայմանագրեր: Շատ պայմանագրերում առաջատար դեր են խաղում ամերիկյան ընկերությունները, կամ հիմնական բաժնետոմսերի մեծ մասը գտնվում է նրանց ձեռքում:

Ադրբեջանը միացել է ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» (ՀՀԽ) ծրագրին 1994 թ. մայիսի 4-ին, ինչը պաշտոնական Բաքվի համար շատ կարևոր նշանակություն ուներ ոչ միայն Ադրբեջան-ՆԱՏՕ փոխհարաբերությունների զարգացման, այլև հայ-ադրբեջանական կոնֆլիկտի տեսանկյունից: Ադրբեջանը 2002 թվականից համագործակցում է դաշինքի հետ գործընկերության անհատական շրջանակներում:

Ուշագրավ է, որ մինչև 2006 թ. ԱՀ-ն մասնակցել է ՆԱՏՕ-ի ՀՀԽ ծրագրի շրջանակներում 403 զինավարժանքների և այլ միջոցառումների: ԱՄՆ-ը և

Թուրքիան աջակցել են Ադրբեջանին տարբեր ռազմական ծառայությունների արդիականացման հարցերում, անցկացրել են սպայական դասընթացներ: Ադրբեջանի խաղաղարարները մասնակցություն են ունեցել նախկին Չարավսլավիայում, Աֆղանստանում և Իրաքում: Ադրբեջանական բանակը, կարելի է ասել, որոշակիորեն փուլային անցում է կատարել դեպի ՆԱՏՕ-ի չափորոշիչներ: Ադրբեջանի ծրագրերում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Թուրքիան, որն ուղեկցվում է «ավագ եղբոր» և ռազմավարական դաշնակցի կարգավիճակով: Թուրքիայից հատկացվող օգնությունը տարեկան կազմում է շուրջ 35-45 մլն դոլլար: Եվ իհարկե, այդ բոլորը Իրանի կողմից դիտվում է իրական սպառնալիք՝ ուղղված իր արտաքին սահմանների անվտանգությանը:

Արևմուտքում հասկանում են, որ Ադրբեջանը փորձում է օգտագործել ՆԱՏՕ-ի հնարավորություններն իր խնդիրները լուծելու համար: Ուստի, ադրբեջանական կողմի՝ ՆԱՏՕ-ի կազմում շուտափույթ կերպով ընդունվելու հայտարարություններին վերաբերվում են մեծ վերապահությամբ՝ հասկացնելով, որ մինչ այդ կազմակերպությանն անդամակցելը Ադրբեջանը դեռևս պետք է անցնի ճանապարհ: Ինչքան էլ Ադրբեջանը պնդի, որ այդ համագործակցությունն ուղղված է Ռուսաստան-Չայաստան համագործակցության դեմ, ԻԻՉ պաշտոնական հանդես եկավ նախազգուշացումներով՝ ընդդեմ ԱՅ-ում ՆԱՏՕ-ի ռազմական բազաների տեղադրման ցանկացած փորձերի:

Առանձին դեպքերում ԻԻՉ կարողացել է որոշակի առունով ստիպել Բաքվին Թեհրանի նկատմամբ հավասարակշռված քաղաքականություն պահպանել: Այս կապակցությամբ «Ջոն Կոլինս-Է Էսլամի» թերթը նշել էր. «Բաքվի հետ պետք է խոսել ուժային դիվանագիտության լեզվով, այլ ոչ թե իսլամական

կարեկցանքի: Ադրբեջանի նկատմամբ ուժային մեթոդների դիմած երկրները դրական արդյունք են ստացել»: 2001 թ. հուլիսին իրանական կործանիչներն ու ռազմանավերը ներխուժեցին ադրբեջանական տարածք և արգելեցին նավթային տեղանքի հետախուզական աշխատանքներ կատարել վիճելի գոտում:

Ներկայումս ԻԻՀ արտաքին քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկն այն է, որ պետք է պահպանվի առկա աշխարհաքաղաքական հավասարակշռությունը: Տարածաշրջանային երկրները չպետք է թույլ տան, որ արտաքին ուժերը միջամտեն տարածաշրջանի երկրների ներքին գործերին կամ փորձեն այս կամ այն ձևով որոշել տարածաշրջանի երկրների ապագա ճակատագիրը: Իրանը չի ցանկանում նաև իր սահմանների հարևանությամբ տեսնել արևմտյան ընկերություններին:

Այսպիսով, սույն դասախոսությունը ցույց տվեց, որ տարածաշրջանում Իրանը փորձում է պահպանել աշխարհաքաղաքական հավասարակշռությունը, ինչը վերջին շրջանում մեծ դժվարությունների է հանդիպում Ադրբեջանի և Արևմուտքի կողմից: Ադրբեջանի զարգացող հարաբերությունները Իսրայելի հետ էլ ավելի են խորացնում Իրանի անվստահությունը Ադրբեջանի նկատմամբ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ և վրաց-աբխազական հակամարտությունը 1991-1994 թթ.,-«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հտ. XXVI, Ե., 2007, էջ 89-99:
2. Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան. հարևաննե՞ր, թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ,-«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հտ. XXII, Ե., 2003, էջ 7-38:
3. Բայբուրդյան Վ., Իսլամը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումները մահմեդական պետությունների քաղաքականության մեջ և միջազգային հարաբերություններում,-«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հտ. XXV, Ե., 2006, էջ 26-54:
4. Բայբուրդյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ.: Հայացք երկու տասնամյակ հեռավորությունից,-«Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով», Միջազգային գիտաժողովի նյութեր, 13 մարտի, 2012, Ե., 2012, էջ 15-54:
5. Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989:
6. Էվոյան Լ., Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան ռազմա-քաղաքական դաշինքի ձևավորման միտումները,-«Վեն», 2012, թիվ 3, էջ 186-194:
7. Թորդարսոն Ֆ., Կրոնական և էթնիկ իրադրությունը Հյուսիսային Կովկասում,-«Իրան-նամե», 1994, թիվ 1, էջ 6:

8. Հակոբյան Ա., Գալստյան Յ., էթնալեզվական գործընթացները Բուն Աղվանքում,-«Հայերենագիտական միջազգային 2-րդ գիտաժողով. Նյութերի ժողովածու, Ե., 1987, էջ 92-93:
9. Հակոբյան Ա., Մաշտոցի երկրորդ հյուսիսային ուղևորության ժամանակը և խնդիրները,-«Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին. Ձեկուցումների ժողովածու, Երևան, 12-17 սեպտեմբերի, 2005 թ.», Ե., 2006, էջ 122-131:
10. Հարությունյան Բ., Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն,-«Վէմ», 2010, թիվ 4, էջ 24-57:
11. Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր,-«Վէմ», 2011, թիվ 2, էջ 30-64; թիվ 3, էջ 34-73:
12. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Ե., 1957:
13. Հովսեփյան Լ., «Թուրքական մոդելը» և 90-ականների սկզբին Կենտրոնական Ասիայում Թուրքիայի արտաքին քաղաքականության պայմանավորվածությունն արևմտյան ռազմավարական շահերով,-«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հտ. XXVII, Ե., 2009, էջ 100-110:
14. Ղազարյան Վ., Համակովկասյան այբուբենի նախագիծ, Ե., 2012:
15. Մարտիրոսյան Վ., Հայ և վրացի ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ), Ե., 1971:
16. Մուրադյան Պ., Կովկասյան մշակութային աշխարհը և Հայաստանը, պրակ Ա, Ե., 2008:
17. Չոբանյան Պ., Հայ-վրացական թագավորության գաղափարը՝ ժԸ դարի երկրորդ կեսի հայ և վրաց ընկալումներում,-«Հանդես ամսօրյա», 2003, թիվ 1-12, էջ 301-340:

18. Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Ե., 2006:
19. Վարդանյան Ա., Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, Ե., 2013:
20. Վարդերեսյան Ա., Իրան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից Աբուլֆազ Էլչիբեյի նախագահության շրջանում,-«Մերձավոր Արևելք», հտ. IV, Ե., 2007, էջ 121-125:
21. Վարդերեսյան Ա., Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումն Ադրբեջանի արտաքին քաղաքական կողմնորոշումների նկատմամբ,- «Մերձավոր Արևելք», հտ. V, Ե., 2008, էջ 161-168:
22. Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Ե., 1981:
23. Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987.
24. Балаев А., Этноязыковые процессы в Азербайджане в XIX-XX вв., Баку, 2005.
25. Буниятов З., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.
26. Варданян Т., Азербайджанцы: История одного незавершенного этнопроекта. Историко-этнологический очерк, Москва, 2012.
27. Гаджиев К., Геополитика Кавказа, Москва, 2001.
28. Гаджиев К., Кавказский узел в геополитических приоритетах России, Москва, 2010.
29. Гаджиев К., «Большая игра» на Кавказе. Вчера, сегодня, завтра, Москва, 2010.
30. Геллнер Э., Нация и национализм, Москва, 1991.
31. Захаров В., Арешев А., Расширение НАТО в государства Закавказья: этапы, намерения, результаты, Москва, 2008.
32. Захаров В., Арешев А., Кавказ после 08.08.08. Старые игроки в новой расстановке сил, Москва, 2010.

33. Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990.
34. Малышева Д., Конфликты в развивающемся мире, России и Содружестве Независимых Государств, Москва, 1997.
35. Мамедова Ф., «История албан» Моисея Каланкатуйского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977.
36. Мамедова Ф., Политическая история и историческая география Кавказской Албании (III в. до н. э. - VIII в. н. э.), Баку, 1986.
37. Меликов Р., Этническая картина Азербайджана в период ахеменидского владычества (VI–IV вв. до н. э.), Баку, 2003.
38. Мурадян И., Политика США и проблемы безопасности региона Южного Кавказа, Ер., 2000.
39. Мурадян П., Кавказский культурный мир и Армения, вып. II, Ер., 2012.
40. Мхитарян Г., Кавказская политика Российского государства в сохранении этноструктуры региона, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտություններ», 2009, րիչ 3, էջ 149-155:
41. Сорокин П., Человек, цивилизация, общество, Москва, 1992.
42. Стародубровская И. В., Соколов Д. В., Истоки конфликтов на Северном Кавказе, Москва, 2013.
43. Тишков В., Очерки теории и политики этничности в России, Москва, 1997.
44. Торосян Х., Топоним «Сомхити» в грузинских первоисточниках, Ер., 2003.
45. Цуциев А., Атлас этнополитической истории Кавказа (1774-2004), Москва, 2006.

46. Яковлев Н., Языки и народы Кавказа: краткий обзор и классификация, Тифлис, 1930.
47. Smith A., The Ethnic Origins of Nations, Oxford, 1986.
48. Smith A., Ethno-Symbolism and Nationalism: a Cultural Approach, London, New York, 2009.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասախոսության կառույցը.....3
Երկու խոսք.....5

ԲԱԺԻՆ Ա.

Դասախոսություն 1. Ներածություն.....8
Դասախոսություն 2. Հյուսիսային Կովկասը հին ժամանակներից մինչև 20-րդ դարի 90-ական թվականների սկիզբը (ընդհանուր ակնարկ).....16
Դասախոսություն 3. Գրավոր նշակույթի զարգացման պատմությունն Այսրկովկասում.....21
Դասախոսություն 4. «Ալբանիա», «Աղուանք», «Առան» տեղանունների ստուգաբանությունն Արևելյան Այսրկովկասի էթնիկական պատմության տեսանկյունից.....27
Դասախոսություն 5. Աղվանքի պատմության «աղրբեջանական հայեցակարգը»՝ քաղաքական դրդապատճառ.....32
Դասախոսություն 6. Հայ-վրացական թագավորության գաղափարը երկու ժողովուրդների քաղաքական նպատակների տեսանկյունից.....42

ԲԱԺԻՆ Բ.

Դասախոսություն 7. Իսլամը որպես քաղաքական միավորման գործոն Կովկասում (20-րդ դարի վերջ).....48
Դասախոսություն 8.Կովկասյան միասնության գաղափարը պատմականության տեսանկյունից.....56
Դասախոսություն 9.Ազգայնականությունը Կովկասում 20-րդ դարի վերջին.....63

ԲԱԺԻՆ Գ.

Դասախոսություն 10. Թուրքիայի աշխարհաքաղաքական դերակատարությունը Կովկասում 20-րդ դարի վերջին.....72
Դասախոսություն 11. Իրան-Աղրբեջան հարաբերությունները 20-րդ դարի 90-ական թվականների սկզբին.....80
Դասախոսություն 12. ԻԻՀ-Աղրբեջան քաղաքական հարաբերությունները 20-րդ դարի վերջին-21-րդ դարի սկզբին.....87
Հանձնարարվող գրականության ցանկ.....92

ՀՈՎՐԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ

(Դասախոսությունների նյութեր)

Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 150 օրինակ:

Տպագրությունը՝ Ա/Չ Ռուբեն Ավետիսյան

ք. Գյումրի, Գորկու 67/62